Azg
Ազգ
1 ՄԱՅԻՍ 1997 ՇԱԲԱԹ #79 (1334)

Ջավախքում իրավիճակը կայուն է

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ. ԱՐՄԵՆՊՐԵՍ Վերջերս վրացական որոշ զանգվածային լրատվամիջոցներ հաղորդել են, թե Ջավախքում Վրաստանի հարավում գտնվող հայկական բնակչություն ունեցող շրջանում, իրադրությունը արվել է ռուսական հատուկ ծառայությունների մեղքով: Վերջիններս, ըստ այդ հաղորդումների, իբր նպատակ ունեն տրոհել Վրաստանն ու Ջավախքը հանձնել Հայաստանին: Այս մասին բացահայտ հայտարարել են ոչ միայն վրացական ընդդիմադիր գործիչները, այլեւ Վրաստանի խորհրդարանի առաջատար խմբակցության ղեկավարը: Բացելով փակագծերը, ասենք, որ խոսքը վերաբերում է Ջավախքը որպես առանձին վարչատարածքային միավոր ճանաչելու մասին տեղի հասարակական-քաղաքական կազմակերպությունների համակարգիչ խորհրդի կողմից կազմակերպվող առաջիկա հանրաքվեի շուրջ ստեղծված լարվածությանը: Այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը տեղեկացրել է, որ Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ-ի ներկայացուցիչը վրացական աղբյուրների հիշյալ հայտարարությունն անվանել է չարամիտ եւ անհիմն հորինված: Ակնհայտ է, շեշտել է ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը, որ այդ հայտարարությունները կասկածի տակ են առնում Ռուսաստանի կողմից Անդրկովկասում տարվող խաղաքաղաքականությունն ու առաջավորում տարածաշրջանը կայուն ու խաղաղ դարձնելու մեր ջանքերը: Ինչ վերաբերում է Ջավախքում ներկայումս տիրող կացությանը, ապա Հայաստանում Վրաստանի դեսպանորդ Գոգիլաձեն հաղորդեց, որ իրավիճակը կայուն է, եւ միջադեպեր չկան:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վրձիններն եւ գրիչները վտանգավոր են պետության համար

Առաջին ընթերցմամբ ընդունվեց ռազմական դրության մասին օրենքի նախագիծը

ՆԱԲԻԼԵ ՄԿՐՏՉՅԱՆ

Աժ ապրիլի 30-ի նիստում քվեարկության հետեւյալ արդյունքներով 115 «կողմ», 1 «դեմ» եւ 9 «ձեռնպահ» ընդունվեց ՀՀ օրենքի նախագիծը ռազմական դրության մասին: Օրինագիծը կարգավորում է ռազմական դրության իրավական հատուկ ռեժիմի պայմաններում ծագող հարաբերությունները, սահմանում է ռազմական դրության հայտարարումը եւ դադարեցման իրավական հիմքերը, իրականացվող միջոցառումները, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը, ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների ղեկավարների եւ պաշտոնատար անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Ռազմական դրություն հայտարարում է ՀՀ նախագահը հանրապետության ամբողջ տարածքում կամ նրա առանձին մասում՝ ՀՀ-ի դեմ ագրեսիա հարձակման դեպքում անմիջական վտանգի սպառնալիքի կամ Աժ-ի կողմից պատերազմ հայտարարելու դեպքում՝ նախապես ունենալով առպահովել ՀՀ անկախությունը, տարածքային ամբողջականությունը եւ անվտանգությունը: Ռազմական դրություն հայտարարելու հետ միաժամանակ ՀՀ նախագահը կարող է հայտարարել ընդհանուր կամ ասպատակի զորահավաք: Ռազմական դրության ժամանակ կարող է նախատեսվել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առանձին իրավունքների եւ ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ: Ռազմական դրությունը դադարեցնում են ՀՀ նախագահը եւ ՀՀ Աժ-ն: Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա

Տես էջ 2

ՍԵՎԱԾՈՎՅԱՆ

Հայաստանը առաջարկել է փոխադրումների եւ էներգետիկ ծրագրեր

Սեւծովյան համագործակցության շրջանակներում անցկացվող գործարար համաժողովի աշխատանքների ընթացքում Հայաստանը հանդես է եկել երկու կոնկրետ նախագծով: Այդ մասին երեկ հայտնեց նախագահի մամուլի խոսնակ Լ. Զուրաբյանը, նշելով, որ առաջին առաջարկը այսպես կոչված «Չորրորդ եվրոպական միջանցքի» շարունակության ծրագիրն է: Ըստ դրա, ընդամենը 4 մլն դոլարի ներդրումով հնարավոր է Հայաստանով ապահովել 37 մլն տոննա տարեկան բեռնափոխադրանքի ծավալ, որից 2/3-ը կլինի տարանցիկ, իսկ 1/3-ը կմնա Հայաստանում:

Երկրորդ առաջարկը նախատեսում է էներգետիկայի ոլորտի համագործակցություն: Էներգետիկ բարեփոխումներից հետո, Հայաստանը կարող է ունենալ էլեկտրաէներգիայի ավելցուկ: Հայաստանի էլեկտրահամակարգը արդեն միացվել է Իրանի էներգահամակարգին, որը թույլ կտա վաճառել էլեկտրաէներգիա: Ըստ մամուլի խոսնակի, այս ծրագրերը հետաքրքրությամբ են ընդունվել համաժողովում: Ի դեմ, այս ծրագրերը կքննարկվեն նաեւ սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկում, որի տնօրեն Էրոլ Վոլկանի հետ Լեւոն Տեր-Պետրոսյանը Ստամբուլում ունեցել է աշխատանքային հանդիպում: Մամուլի քարտուղարը նշեց, թե նման առաջարկների իրագործումը եւ շրջանային համագործակցության զարգացումը կնպաստեն խաղաղությանը եւ կայունությանը տարածաշրջանում, կոնֆլիկտների կարգավորմանը, դառնալով փոխըմբռնման լավագույն միջոց:

Լեւոն Զուրաբյանը, վերհիշելով Տեր-Պետրոսյանի եւ այլ երկրների նախագահների հետ ունեցած հանդիպումները, հայտարարեց, որ Հայաստանի արտաքին քաղաքականության դոկտրինան մնում է անփոփոխ: Հայաստանի անվտանգության եւ զարգացման լավագույն երաշխիքն է բոլոր հարեւան պետությունների հետ բնականոն հարաբերությունների զարգացումը: Մամուլի քարտուղարը նշեց, որ նման համագործակցությունը չի կարող բացասական հետեւանքներ ունենալ: Ինչ վերաբերում է Ալիեւ-Տեր-Պետրոսյան հանդիպմանը, ապա երկու նախագահները հավաստել են, որ կձեռնարկեն բոլոր միջոցները զինադադարը պահպանելու համար:

Ա. Ս.

Հայ-թուրքական հարաբերությունների հետ Ադրբեջանը կապ չունի

30 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» «Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմ չի լինի», հայտարարել է երեկ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը Ստամբուլում՝ հայոց պատրիարքարան այցելության ժամանակ: Թուրքական «Զամանդիրիյեթ» թերթը մեջբերելով նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի այս բառերը, այսօր նշել է նաեւ, որ Հայաստանի նախագահն անհրաժեշտ չի համարում կապել հայ-թուրքական հարաբերությունները Ադրբեջանի հետ: Ավելին, Լեւոն Տեր-Պետրոսյանը հույս է հայտնել, որ մոտ ապագայում Անկարայում կբացվի Հայաստանի դեսպանատունը: Սակայն անկախ ամեն բանից արդեն այսօր Թուրքիայի հետ անհրաժեշտ է զարգացնել մշակութային կապերը, ընդգծել է նախագահը: Թուրքական թերթերը հրապարակել են նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի այն կանխատեսումը, որ 2-3 տարի անց, երբ վերացվի շրջափակումը, հայաստանցիները կապրեն ավելի լավ կյանքով:

Ստրասբուրգում նույնպես լիսաբոնյան մթնոլորտ

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ. ԱՐՄԵՆՊՐԵՍ Ապրիլի 21-25-ը Ստրասբուրգում կայացած Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի արդյունքները լրագրողների համար մեկնաբանելով Հայաստանի պատվիրակության ղեկավար, Աժ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովհաննես Իգիթյանը նշեց, որ Լեռնային Ղարաբաղի առումով մթնոլորտը Ստրասբուրգում բավական լարված եւ անբարենդաստ էր:

Դրա հիմնական պատճառն ըստ Հ. Իգիթյանի, Լիսաբոնում ընդունված հայտնի հայտարարությունն է, որի հիմնական դրույթները Ստրասբուրգի փաստաթղթում կրկնվեցին: Հայաստանն ունենալով հատուկ իրավիրյակարգավիճակ, չէր կարող մեծ ազդեցություն ունենալ վերջնական արդյունքի վրա:

Այնուամենայնիվ, հաջողվել է բանաձեւի վերջնական տարբերակում հասնել նրան, որ տարածքային ամբողջության սկզբունքը չնշվի: Հ. Իգիթյանը Ստրասբուրգում փորձել է համոզել, որ ԵԽ վեհաժողովը տարածքային բախումների լուծման գերխնդիր չունի, այլ դրանք է զբաղվի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով, ինչը մի շարք պատգամավորների աջակցությունն է ստացել:

Նշվեց, որ շուտով Հայաստան կժամանի կազմակերպության նախագահ տիկին Լենի Ֆիշերը, եւ մի գուցե արդեն տեղում կարելի լինի ապացուցել, որ նախկին ԽՍՀՄ տարածքում բախումների կարգավորման մեկ միասնական սխեմա գտնել դժվար թե հաջողվի:

Լենի Ֆիշերի այցի մասին՝ էջ 8-ում

Կաշառակերների եւ բռնաբարողների վրա համաներում չի տարածվելու

Աժ-ի ապրիլի 30-ին փակ նիստում քննարկվեց Համաներում հաստատելու մասին որոշման նախագիծը, որի նախաձեռնությունը պատկանում է ՀՀ նախագահին: Որոշման նախագծում նշված է, որ պատժի կրումից ազատվում են մինչեւ 3 տարի ազատազրկման դատապարտված անձինք, մինչեւ 5 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամները, կանայք եւ 60 տարին լրացած տղամարդիկ, մինչեւ 18 տարեկան դառնալը հանցանք կատարած անձինք: Կարծվում են այն անձանց կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ հետաքննության, նախաքննության մարմինների, ինչպես նաեւ դատարանների վարույթներում գտնվող, բայց դատաքննությունը չսկսված գործերը, որոնց համար օրենքով սահմանված է ազատազրկում մինչեւ 3 տարի ժամկետով կամ ազատազրկման հետ չկապված պատիժ: Համաներում տարածվում է նաեւ քրեական օրենսգրքի 206՝ իմացել է եւ չի հայտնել, հոդվածով դատապարտվածների վրա:

Մինչեւ վերջ իրենց պատիժը կրելու են բռնաբարության համար դատապարտվածները (հոդված 112), ինչպես նաեւ մեծ ու միջին չափի կաշառակերության հոդվածով դատապարտվածները:

1991 թ. հետո սա 4-րդ համաներումն է: Փաստորեն, համաներումը չի տարածվում ներկայումս անցկացվող քաղաքական եւ ոչ մի դատավարությամբ դատապարտվածների վրա:

Երեկվա նիստում քվեարկության դրվեց Աժ-ն կեսից ավելի նիստերից անհարգելի բացակայած պատգամավորների հարցը:

Ռուբեն Հակոբյանի բացակայությունները անհարգելի ճանաչելուն «կողմ» քվեարկեց 17 պատգամավոր, Արշակ Սադոյանի՝ 26-ը, Վազգեն Մանուկյանի՝ 16-ը, Դավիթ Վարդանյանի՝ 20-ը, Շավարշ Քոչարյանի՝ 25-ը, Սեյրան Ավագյանի՝ 27-ը, Պարույր Հայրիկյանի՝ 21-ը, Ներսես Չեյնալվանդյանի՝ 19-ը:

Աժ-ի երեկվա նիստում 2-րդ ընթերցմամբ ընդունվեցին ՀՀ տարածքում չափումների միասնականության ապահովման մասին, ինչպես նաեւ Ստանդարտացման եւ սերտիֆիկացման մասին օրենքի նախագծերը:

Ն. Ս.

Իրանը չի ընդունում տարած-բերած դեսպաններին

30 ԱՊՐԻԼ, RFI, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» Թեհրանում այսօր հրապարակվեց Իրանի արտգործնախարարության կոմյունիկեն, որում նշվում է, թե Իրանը հրաժարվում է բանակցություններ անցկացնել եվրամիության հետ ահաբեկչության ու մարդու իրավունքների հարցերի, ինչպես նաեւ սովորական, միջուկային եւ քիմիական զենքերի տարածման դեմ պայքարի հարցերի: Բացի այդ, նույն օրը Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեին կարգադրեց Թեհրանում չընդունել Գերմանիայի դեսպանին, ինչպես նաեւ եվրամիության երկրներ չուղարկել իրանյան դեսպաններ, իսկ Իրանի արտգործնախարար Վելայաթին մամլո ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ բացի Գերմանիայի դեսպանից, նույն բախտին է արժանացել նաեւ Դանիայի դեսպանը, իսկ Իրանի դեսպանների վերադարձը եվրամիության երկրներ հետաձգվում է անորոշ ժամանակով:

ՄՈՍԿՎԱ

Անդրկովկասը մնում է Ռուսաստանի կենսականորեն կարեւոր շահերի գոտի

ՄՈՍԿՎԱ, 30 ԱՊՐԻԼ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պետական դումայի ԱՊՀ-ի գործերի եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի փոխնախագահ Անատոլի Չեխոեւն ամփոփել է Անդրկովկասում Ռուսաստանի Դաշնության հաղթականության մասին դոնփակ խորհրդարանական ունկնդրումների արդյունքները, որոնք կայացել են այս տարվա ապրիլի 8-ին:

Ինչպես հայտնել է Անատոլի Չեխոեւը, ունկնդրումների բոլոր մասնակիցները եկել են այն եզրակացության, որ Անդրկովկասը մնում է Ռուսաստանի կենսականորեն կարեւոր շահերի գոտի, որոնց բնույթը որոշվում է նրա անվտանգության եւ տնտեսական զարգացման հնարավորությունների համար տարածաշրջանի աշխարհաքաղաքական դրության կարեւորությամբ: Ռուսի ունկնդրումների մասնակիցները հայտարարել են, որ Ռուսաստանի ռազմական ներկայությունը տարածաշրջանում ՆԱՏՕ-ի ակտիվության եւ Թուրքիայի ռազմական հզորության աճի պայմաններում «հստակ իրավական հիմքի կարիք ունի»:

Անատոլի Չեխոեւի ասելով, այս ունկնդրումները մեկ անգամ եւս հավաստեցին, որ տարածաշրջանում առկայացնող հիմնական գործոններից մեկը մնում՝ են Լեռնային Ղարաբաղի, Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հակամարտությունները, եւ առանց այս հակամարտությունների լուծման չի կարող կայուն խաղաղություն լինել տարածաշրջանում, եւ չեն կարող առպահովվել Ռուսաստանի երկարաժամկետ շահերը:

Այս առնչությամբ ԱՊՀ-ի գործերի եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեն Պետական դումային հանձնարարական է տվել պատրաստել ՌԴ նախագահի եւ կառավարության խաղաղարար քաղաքները տարածաշրջանի հակամարտությունների կարգավորման ոլորտում եւ ՌԴ արտգործնախարարությանը հանձնարարական տալ բանակցություններում առաջնորդվել կողմերի իրավահավասարության սկզբունքով:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ԵՂԵՌՆ-82

Ապրիլի 24-ը Բելգրադում

Այդ օրը Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադում ժամը 11-ին «Սուրբ Գաբրիել հրեշտակապետ» եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ հավաքվել էին գաղութի հայերը՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու հայ ժողովրդի ամենամեծ ողբերգության՝ Հայոց մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին: Հավաքին ներկա էին նաեւ սերբ եւ այլազգի բազմաթիվ հյուրեր, պաշտոնական անձինք:

Եկեղեցու զանգերը ազդարարեցին ժամերգության սկիզբը: Վառվող մոմերն ու խաչքարի ծածանվող եռագույնը խորհրդանշում էին հայի հույսն ու հայոց պետականությունը:

Առաջինը ներկաներին դիմեց Սերբիայի հայոց միության նախագահ Միհրան Վարդապետյանը: Ողջունելով ներկաներին՝ նա նշեց, որ 82 տարի անց էլ մենք եւ մեր սերունդները, յուրաքանչյուր անձ, ով հայ լինելու մեծ կոչում ունի, չպիտի մոռանա մեր ժողովրդի այդ մեծ ողբերգությունը, երբ մի ողջ ժողովուրդ կտրվեց արմատից ու զրկվեց իր բնօրրանից:

Բանաստեղծուհի Անուշ Բալայանը ընթերցեց հայերեն գրած իր բանաստեղծությունը՝ նվիրված Ապրիլի 24-ին: Այնուհետեւ բանաստեղծությունը ընթերցվեց սերբերեն:

Ինչպես աշխարհում յուրաքանչյուր հայ գաղութում, Ապրիլի 24-ին այստեղ հնչեցին Պարույր Սեւակի «Անլռելի զանգակատուն» պոեմից հատվածներ: «Ողջանք եղեռնական» բանաստեղծությունով հանդես եկավ արեւելագետ-բանաստեղծ Ժաննա Հակոբջանյանը:

Շուրջ մեկ տարի գործող՝ Սերբիայում առաջին հայ դպրոցի նախակրթական-մանկապարտեզի մանուկները հայերեն բանաստեղծություններով ու հայրենասիրական երգերով հիացրին ներկաներին:

Միջոցառման ընթացքում՝ դաստիարակելով 1915-ին թուրքական կառավարության կողմից կազմակերպված ցեղասպանությունը, սերբ եւ հայ ժողովուրդների նմանատիպ ճակատագիրը, որը շարունակվում է եւ այսօր, մեկ անգամ եւս գալիս է հաստատելու «քաղաքակիրթ» աշխարհի անտարբերությունը «փոքր» ժողովուրդների հանդեպ:

Նույն օրը Բելգրադի պետական հեռուստատեսության առաջին ծրագրի «Դնեւնիկ» հեռուստահաղորդման ընթացքում միջոցառումից ցուցադրվեցին կադրեր:

ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԺԱՆՆԱ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ
ԱՐՈՒՍՅԱԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հայոց լեզվի եւ գրականության
ուսուցչուհիներ

Սկիզբը էջ 1

Ռազմական դրության ժամանակ կիրառվող միջոցառումներ կարող են լինել տարբեր մասնավոր տաղես խաղաքաղաքների եւ տրանսպորտային միջոցների տեղաշարժման սահմանափակում բեռների ներմուծման եւ արտահանման մուտքի եւ ելքի իրավական հատուկ ռեժիմի սահմանում տրանսպորտային միջոցների զննում, պարեկային ժամի սահմանում, նախնական գրաքննություն մտցնելու միջոցով մամուլի եւ ՋԼՄ-ների ազատության ժամանակավոր սահմանափակում կուսակցությունների, ՀԿ-ների ու դրանց միավորումների գործունեության սահմանափակում, ինչպես նաեւ գործադուլների, հավաքների, հանրահավաքների, փողոցային երթերի ու ցույցերի կազմակերպման եւ անցկացման արգելում, կաղի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանում: Ռազմական դրության գործողության ժամանակաշրջանում լրացուցիչ իրավասություններ կարող են տրվել զինվորական մարմիններին, պետական կառավարման մարմիններին, կարող են նշանակվել ռազմական դրություն հայտարարված տարածքի պարեհներ: Ռազմական դրության հայտարարման պահից 5 օրվա ժամկետում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը պետք է հայտնվի Հանրապետության կողմից ծանուցվի խաղաքաղաքների, խաղաքաղաքների եւ ազատությունների այն սահմանափակումների մասին, որոնք հետեւում են 1966 թ. դեկտեմբերի 16-ի խաղաքաղաքական եւ խաղաքաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով ՀՀ ստանձնած պարտավորություններից: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը պետք է տեղեկացվի ռազմական դրության դադարեցման մասին: Ռազմական դրության իրավական հատուկ ռեժիմով կարող են ժամանակավորապես սահմանափակվել մարդու եւ քաղաքացու առանձին իրավունքներն ու ազատություններ:

Առարկելով օրինագծի մի շարք դրույթների մասնավորապես ռազմական դրության ժամանակ նախնական գրաքննություն սահմանելու եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը սահմանափակելու հարցերին, Վիկտոր Դալլաքյանը նշեց, որ հակասություն է առկա: Հիշյալ դրույթները հակասում են Սահմանադրության 44 եւ 23 հոդվածների դրահանջներին: Օրենքի նախագծի այդ դրույթը Դալլաքյանը որակեց որպես «դամոկլյան սուր կախված մամուլի գլխին»: Ինչ վերաբերում է կուսակցությունների գործունեության սահմանափակմանը, ապա ըստ Դալլաքյանի, «այսօրինակ մոտեցումը կարող է դաստիարակել օրինակ ընդդիմադիր կուսակցությունների հետ հաշվեհարդարի կամ հանգեցնել զանազան գավեշտական դեպքերի մասնավորապես կարող է արգելվել նկարիչների միության գործունեությունը այն դեպքում, երբ ռազմական դրության ժամանակ խիստ վտանգավոր են»:

Վերջում նկատեցի՝ որ Հայաստանում ռազմական դրության ոչ տրամաբանությունը գործում է հատկապես հետընտրական ժամանակահատվածում:

Օրենքը հետադարձ ուժ չունի

Աժ-ի երեկվա հարցուպատասխանի ժամանակ 18 տարին լրացած երիտասարդներին, այդ թվում նաեւ սովորողներին բանակ զորակոչելու հարցին ի պատասխան Վազգեն Սարգսյանը նշեց, որ նման օրենքի նախագիծ կա կառավարությունում, սակայն անգամ դրա ընդունվելու դեպքում այն չի տարածվելու ուսանող երիտասարդության վրա, 1-ին կուրսից մինչեւ վերջինը, քանի որ օրենքը հետադարձ ուժ չունի: Այսինքն 18 տարին լրացած ուսանողները բանակ չեն զորակոչվի:

Ն. Մ.

ԱԼԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Վրձինները եւ գրիչները վտանգավոր են պետության համար

ՍԱՍՈՒԼ

«Գարուն» ամսագիրը 30 տարեկան է

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երիտասարդական «Գարուն» ամսագիրը դարձավ 30 տարեկան. ապրիլի 30-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը հավաքված մայրաքաղաքի գրական ասպետները՝ Սիլվա Կապուտիկյանից ու Մարո Մարգարյանից, Գեւորգ Էմինից ու Հրաչյա Հովհաննիսյանից մինչեւ մեր նոր գրական երիտասարդությունը, մամուլը, հեռուստատեսությունն ու ռադիոն, նշեցին այդ հոբելյանը:

«Գարունի» անցած ճանապարհի մասին խոսեցին նրա խմբագիր Լեւոն Անանյանը, պրոֆեսոր Արտեմ Հարությունյանը, հին եւ նոր գարունականները, որոնք այսօր նշանավոր գործիչներ են հանրապետության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում:

Արմենպրեսի թղթակցի խնդրանքով «Գարունի» վերաբերյալ իրենց գնահատականներն արտահայտեցին՝

«Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը.

«Գարունի» ծնունդը 60-ական թվականների վերջերին մենք՝ այն ժամանակ ուսանողներ մեծագույն սխրագործություն էինք համարում, ասաց նա: Նրա էջերում մենք տեսնում էինք մեր ժողովրդի, մեր մշակութայնության արժանապատվությունը: Ես այսօր եմ հասկանում, թե ինչպիսի խոչընդոտներ հաղթահարելով էր նրա խմբագականը՝ սկսած երջանկահիշատակ, իմ սիրելի ընկեր Վարդգես Պետրոսյանից մինչեւ այսօրվա ղեկավարությունը, ստեղծում համարները, եւ այսօր ինչպիսի լավ հորիզոններ են բացվել ամսագրի առջեւ:

Հայաստանի գրողների միության նախագահ Հրանտ Մաթեւոսյանը՝

«Գարուն» ամսագրի նախադեղերը միության մեջ կային, իսկ մեզ մոտ գաղափարական քաղաքագեղարվեստական միտքը ես էր մնում Մոսկվայից: Եւ, ի վերջո, կոմկուսի կենտկոմում գլխի ընկան, որ չի կարելի այն պահել բարձիթողի վիճակում, նախաձեռնեցին եւ այդի ընկած մի լրագրողի ու հասարակական գործչի, որ Վարդգես Պետրոսյանն էր, ընտրեցին. ծիշտ ընտրություն կատարեցին, եւ դա բախտավորություն էր: Եվ այն, ինչ միության մասշտաբով դառնում էր թարմ գրականություն, այսպես կոչված, այլախոհություն, այստեղ, «Գարունի» էջերում պետականորեն պաշտպանված գրականություն էր...

Կիպրոսի գործարարների պատվիրակությունը կժամանի վաղը

Կիպրոսի հույն առեւտրականների եւ արդյունաբերողների 18 հոգանոց պատվիրակությունը Հայաստան կժամանի վաղը՝ մայիսի 2-ին. Բեյրութի վրայով, ինչպես հաղորդում է Նիկոսիայից մեր հատուկ թղթակից Ջորջ Տեր-Բարթողը: Պատվիրակությունը Հայաստանում կմնա 1 շաբաթ, որի ընթացքում կկազմակերպվի կիպրական ապրանքների եւ արդյունաբերության ցուցահանդես:

Կիպրոսի կառավարությունը, ինչպես նաեւ Հունաստանում եւ Կիպրոսում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանի խնդրանքով պատվիրակությանը կընկերակցի Կիպրոսի խորհրդարանում հայ համայնքի ներկայացուցիչ Պետրոս Գալայճյանը, որ նաեւ վերջերս ստեղծված Հայաստան-Կիպրոս բարեկամության ընկերության նախագահն է: «Իմ նպատակն է օգտակար ըլլալ թե՛ կիպրական պատվիրակության եւ թե՛ Հայաստանին, ասաց նա Բեյրութ մեկնելուց առաջ: Հույս ունիմ, որ մեր պատվիրակության այցը կնպաստե, որպեսզի հայկական արտադրանքներ ալ ներածվին Կիպրոս: Ասիկա ընդամենը առաջին քայլն է, եւ այս պատվիրակությունը առաջինն է»:

Պատվիրակության հայաստանյան կազմակերպիչն է Կիպրոսի առեւտրի եւ արդյունաբերության պալատը, սերտ համագործակցությամբ Նովգորոդի ռեգիոնալ կառավարության առեւտրային պալատի:

Բաֆֆի Կ. Հովհաննիսյանի հոդվածը Politique e'trange're-ում

ԵՐԵՎԱՆ, 28 ԱՊՐԻԼ: Ֆրանսիական Politique e'trange'ere («Արտաքին քաղաքականություն») հանրահայտ ամսագիրն իր ձմեռ 1997 համարում տպագրել է Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Բաֆֆի Կ. Հովհաննիսյանի «Կովկասի անվտանգության եւ խաղաղության հեռանկարները» հոդվածը: Անդրադառնալով Կասպյան ավազանում եւ Կենտրոնական Ասիայում վերանորոգված մրցաղայքարին, հոդվածագիրը մասնանշում է այդ համատեքստում Անդրկովկասի աշխարհաքաղաքական մեծ նշանակությունը:

«Արեւմուտքն առավել խոր հանձնառություն պետք է կենսագործի հաղորդակցության այլընտրանքային ուղիների զարգացման եւ կովկասյան պետությունների տնտեսական սերտաճման ու բարգավաճման գործում: Համաշխարհային հանրությունը պետք է նոր եւ առաջադեմ մոտեցում ցուցաբերի դարաբաղյան խնդրի նկատմամբ: Եվ վերջապես, հրադարակավ անդրադառնալով Հայոց ցեղասպանությանն ու դրա ժառանգությանը, այն պետք է խթանի Թուրքիա-Հայաստան երկկողմ հարաբերությունների իրական եւ ոչ հարդարանքային կարգավորումը՝ հայ եւ թուրք ժողովուրդների հաշտեցումը», նշում է հեղինակը:

Ավստրիահայ բժիշկը 4 ավտոբուս նվիրեց Գյումրիին

ԳՅՈՒՄՐԻ, 30 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ավստրիայի Թիրոլիենցի քաղաքի կլինիկայի տնօրեն, մանկաբույժ Ներսես Առաքելյանը, որը զգալի ներդրում ունի աղեսի գոտում կառուցված ավստրիական մանկական հիվանդանոցի շինարարության կահավորման եւ բժիշկների վերապատրաստման գործում, վերջին գտնվում էր Գյումրիում: Նա Ավստրիայում գլխավորում է հանգանակությունների կազմակերպման ծրագիրը, որի միջոցներն ուղղվում են հիշյալ բուժհիմնարկի գործունեության բարելավմանը: Այս անգամ բարերարը Գյումրի է հասցրել 900 հազար շիլինգ արժողությամբ 4 ավտոբուս, որոնց շահագործումից ստացված եկամուտները կտրամադրվեն մանկական հիվանդանոցին:

Լենինի արձանի պատվանդանը հողին հավասարեցնելու գործը գլուխ է գալիս

Համաշխարհային հեղափոխության առաջնորդի արձանի պատվանդանն արդեն մի քանի ամիս քանդվում է: Քանդման աշխատանքներն սկսվեցին համեմատաբար տաք ձմեռվա ամենասառը հատվածում եւ ընթանում էին անտարբեր թափով: Թվում էր, քաղաքային իշխանությունները (նախաձեռնությունը, եթե չեմ սխալվում, քաղաքապետարանինն էր) պատրաստվում են գարունը դիմավորել առանց կոմունիզմի տխուր ուրվականը հիշեցնող հետքերի: Սակայն գարնանամուտին Հանրապետության հրապարակի հողին հավասարեցվող հատվածը բզկտված վերքի էր նման եւ կարող էր պատկերացում տալ ռմբակոծությունից տուժած արցախյան բնակավայրերի մասին: Պատվանդանի տեղում ծաղկաթմբեր հիմնելու գործընթացը գլուխ չէկավ նաեւ Մայրության եւ գեղեցկության տոնից առաջ (մեր համաքաղաքացիների մի մասը ենթադրում էր, թե այն կնշանավորվի «Բրաբիոն ֆլորա սերվիսի» կամ շամիրամուհիների հերթական զանգվածային միջոցառմամբ): Պարզվում է, կոմունիստներն աննեղելիորեն ամուր էին կառուցել մարդկության կարմիր աղագայի առաջամարտիկին նվիրված այս կոթողը, այնքան ամուր, որ դժվար, շատ դժվար է քանդելը: Մի կողմից ափսոսալով, որ սույն հայրենանվեր գործը շոշափելի տառապանքներ պատճառեց մեր շինարարներին (չէ՞ որ նրանց եռանդը կարող էր օգտագործվել ամրոցակերտ առանձնատների թիվն ավելացնելու համար), մյուս կողմից թերեւս արժե ուրախանալ, որ կոմունիստների սարքածը քանդելն այնքան էլ դյուրին չէ: Հակառակ դեպքում, ո՞վ գիտե, քանդելու համար այլ օբյեկտներ էլ կգտնվեին:

Ինչեւէ, Հանրապետության շինհրապարակը հիմնականում ազատվել է քանդված պատվանդանի ավերակներից եւ արդեն չի թաքնվում հետաքրքրասեր աչքերից: Պետք է ենթադրել, որ Անկախության օրը կդիմավորենք բարեկարգ, գարնանավայել հարդարված հրապարակում, ժողովուրդն էլ կասի. «Ո՞վ էր ասում, թե մեր իշխանությունները միայն քանդել գիտեն...»

ԼԵՎՈՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակվում է տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թելեֆոն 562941, AT&T (3742) 151065
e-mail INTERNET azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային
ծառայություն / 581841
Apple Macintosh
Համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Յողուածը «Ազգին» պարտադիր է
«AZG» DAILY NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ

Զ. Ժվանիա. «Վրաստանը չպետք է ներքաշվի հարեւանների միջեւ առկա տարաձայնությունների մեջ»

ԹԲԻԼԻՍԻ, 30 ԱՊՐԻԼ, ՓԱՍՏ. Հայ-վրացական բարձր մակարդակի հանդիպումը նախաբանող հարցազրույցների շարքում ներկայացնում ենք ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆԻ եւ ՏԻԳՐԱՆ ՆԱՂԴԱՍՅԱՆԻ հարցազրույցը Վրաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ Զուրաբ Ժվանիայի հետ.

– Ըստ Ձեզ, ի՞նչ գնահատական կարելի է տալ հայ-վրացական միջխորհրդարանական համագործակցությանն ու ընդհանրապես երկու պետությունների հարաբերություններին:

– Մեր համագործակցությունը, կարելի է ասել, եզակի է եւ լիովին կերդել այն կոնկրետ մեխանիզմներին ու որոշումներին, որ թույլ կտան առանց լուրջ տարաձայնությունների համագործակցել արդեն միջոցական մակարդակում, ստեղծել միասնական ու հարմոնիկ համակարգ Հարավային Կովկասում:

– Իսկ ինչպե՞ս պետք է երկկողմ համաձայնագրերի ու պայմանագրերի ոգին փոխանցվի երկու երկրների ժողովուրդներին:



– Մենք տարբեր մեխանիզմներ ենք նախաստեղծում: Արդեն ստեղծել ենք խառը միջխորհրդարանական հանձնաժողով, որ համաձայնության սկզբունքով բնդգրկված է Հայաստանի ու Վրաստանի խորհրդարանականներ: Շատ կցանկանայինք եւ գիտեմ, որ դա նաեւ պրն Լեւոն Տեր-Պետրոսյանի ցանկությունն է, որ ղեկավարի այդ հանձնաժողովների նիստերն ավելի դարբերական բնույթ կրեն: Սա այն վայրն է, որ կարող ենք բանավիճել, քննել առկա խնդիրները ու գալ համաձայնության: Հանդիպած ենք, որ մեր նախաձեռնած ցանկացած քայլ անմիջապես իր բարերար ազդեցությունը կունենա երկու երկրների ժողովուրդների վրա:

– **Հայտնի է, որ դաշնական Բաֆուն դիմել է Ձեր խորհրդարանին կոչ անելով դատապարտել ռուսական զենքի, այսպես կոչված, ադրբիջանի մասակարարումը: Ինչպե՞ս է գնահատվում Հայաստանին: Ո՞րն է լինելու Վրաստանի խորհրդարանի արձագանքը:**

– Մեր խորհրդարանը հանձնարարություն է տվել դաշտպանության եւ ազգային անվտանգության հարցերով կոմիտեին մանրամասնորեն հետաքննել այդ հարցը: Վրաստանի համար հարկավ անընդունելի է ներքաշվել իր հարեւանների միջեւ առկա տարաձայնությունների մեջ: Մեզ համար գերակայողը մեր արտաքին քաղաքականության մեջ երկու մեծավոր հարեւանների հետ ամենահարմոնիկ ու սերտ փոխհարաբերությունների հասատումն է: Համոզված ենք, որ դա բխում է ոչ միայն Վրաստանի շահերից, այլեւ նպաստավոր է մեր բարեկամների համար թե Հայաստանում, թե Ադրբեջանում:

– **Մեր երկու երկրների միջեւ ստորագրված փաստաթղթերի մեկ երրորդն է միայն վավերացվել երկու հանրապետությունների խորհրդարաններում: Ինչո՞ւ է ձգձգվում մնացածի վավերացումը եւ, ըստ Ձեզ, ի՞նչ նոր համաձայնագրեր են այսօր անհրաժեշտ համագործակցության խորացման համար:**

– Կարծում եմ, որ ստորագրված համաձայնագրերից ոչ մեկը վավերացման խնդիր չի ունենա: Սա դյուրացնող տեխնիկական հարց է: Երբ կառավարությունը դրան կդարձնի խորհրդարան ներկայացնելիք, կվավերացվեն: Սա այն ոչ հանախ հանդիպող երջանիկ դեպքերից է, երբ երկու կառավարություններն ու խորհրդարանները ունեն տարաձայնություն չունեն: Ինչ մնում է նոր համաձայնագրերին, ապա գտնում եմ, որ իրավական-օրենսդրական դաշտն այսօր առկա է: Մնացյալի մասին պետք է մտածենք արդեն ստորագրված համաձայնագրերի իրականացման ընթացքում: հատկապես ուշադրություն դարձնելով տնտեսական պրոցեսի փաստաթղթերին, փոխադարձաբար միմյանց մասնակից դարձնելով հետաքրքիր նախագծերի իրականացմանը:

ԱՍՈՒԼԻՍ

«Հայ եւ հույն ժողովուրդները պոտենցիալ դաշնակիցներ են»

«Ապրիլի 30-ից ՀՀ-ում ստեղծվել է հանրապետությունում գործող հունական կազմակերպությունների կոորդինացիոն նոր խորհուրդ, որի հիմնական նպատակն է կասեցնել հույների արտագաղթը Հայաստանից եւ նպաստել հայ-հունական համագործակցության զարգացմանն ու խորացմանը»: Այս մասին ապրիլի 30-ին կայացած մամուլի ասուլիսում հայտարարեցին երեւանում գործող «Պատրիդա» կազմակերպության ղեկավար էդուարդ Պոլատովը (Պոլատիդիսը), Գյումրիի «Ֆաետոն» կազմակերպության ղեկավար Կարինե Տուսունիդիսը, Վանաձորի «Էլպիդա» կազմակերպության ղեկավար Արկադի Խիտարովը եւ Ստեփանավանի «Պոնտոս» կազմակերպության ղեկավար Ռոման Արաբովը: Հիշյալ կազմակերպությունների ղեկավարները տեղեկացրին, որ նախկին ՀՀ հույների դաշնությունն այլեւս ի վիճակի չէ կարգավորելու Հայաստանում բնակվող հույն քաղաքացիներին հուզող բազմաթիվ խնդիրները, ուստի նշյալ կազմակերպությունները դուրս են գալիս դաշնության կազմից: Դեռ ավելին, 1995 թ. մայիսից ի վեր ՀՀ-ից արտագաղթել է հանրապետությունում բնակվող հույների կեսից ավելին: «Պատրիդայի» ղեկավար էդուարդ Պոլատովը նշեց, որ կազմակերպությունը հայ-հունական կապերի ամրապնդմանն ուղղված տարբեր ծրագրեր է ներկայացրել ՀՀ-ում Հունաստանի դեսպանատուն, սակայն ծրագրերն այդպես էլ չեն իրականանում: Խոսքն առաջին հերթին ՀՀ-ում հայ-հունական բանկի, հայ-հունական համալսարանի, համատեղ ձեռնարկությունների ստեղծման, ԼՂՀ-ում հունական Մեհմանա գյուղի վերաբնակեցման, Հայաստանի, Հունաստանի, Կիպրոսի եւ Ղարաբաղի կապերի ամրապնդման, ՀՀ-ում հունական ուղղափառ եկեղեցու թեմի բացման, լրատվական համատեղ քաղաքականության եւ այլ հարցերի մասին է:

«Հայ եւ հույն ժողովուրդները պոտենցիալ դաշնակիցներ են, որոնք պետք է ձգտեն ռազմավարական ապագա ծրագրերի իրականացմանը: ՀՀ-ում հունական կազմակերպությունների կոորդինացիոն նոր խորհուրդը լի է վճռականությամբ նպաստելու այդ դաշնության ստեղծմանը», ասաց էդուարդ Պոլատովը:

ԱՍՏՂԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԼՂՀ

Գործազրկության նպաստը՝ 3000 դրամ

ԼՂՀ աշխատանքի եւ զբաղվածության կենտրոնի վարչության պետ Դմիտրի Հայրապետյանի տեղեկատվությամբ, ներկայումս կենտրոնում կատարվում է գործազուրկների նպաստների վերահաշվարկում՝ կապված նպաստների նոր չափերի սահմանման հետ: Այս օրերին վճարվում են 1996 թ. սեպտեմբերի գործազրկության նպաստները: Նույն աղբյուրի համաձայն, ԼՂ կառավարության որոշմամբ 1997 թ. հունվարից գործազրկության նպաստի չափը 3000 դրամ է սահմանված:

Գրանցվեց եւս 2 կազմակերպություն

ԼՂՀ արդարադատության պետվարչության պետ Յուրի Հայրապետյանի վկայությամբ ներկայումս Լեռնային Ղարաբաղում գրանցված է ավելի քան 20 հասարակական կազմակերպություն: Վերջերս գրանցվեցին ծայրահեղ աղքատության մեջ գտնվող կարիքավոր ընտանիքների օգնության կազմակերպությունը եւ ՀՀ տարածքի ֆիզիկական

«Կրոն» առարկան ԼՂՀ դպրոցներում

Ինչպես հայտնի է, Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմին կից վերջերս ստեղծվել է քարոզչական կենտրոն, որի նպատակն է Ավետարանի քարոզումը Ստեփանակերտում եւ ԼՂՀ շրջաններում: Արցախյան թեմից ստացված լուրերի համաձայն, նոր ուսումնական տարվանից ԼՂՀ դպրոցներում, ամենայն հավանականությամբ, կմտցվի «կրոն» առարկան:

Ա. Ա.

Ջրհեղեղ Վայոց Ձորի մարզում

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. Ըստ Վայոց Ձորից ստացված տեղեկությունների, վերջին օրերին տեղացած անձրեւների հետեւանքով Արփա գետի մակարդակը բարձրացել է 3-4 մետրով:

Ինչպես «Նոյյան տապան» թղթակցին հայտնեցին «Ագրոպրես» լրատվական գործակալությունից, մեծ չափով վնասվել են գետի մերձակա բնակավայրերի՝ Վայք, Ագարակաձոր, Եղեգնաձոր, Մալիշկա, Զառիթափ, Արփի, Շատին եւ Գետափ գյուղերի հողատարածքները: 200 հա մնացել է ջրի տակ, շուրջ 50 հա ողողվել է: Վնասի հետեւանքները վերացնելու համար ստեղծված է հանձնաժողով: Մարզի գյուղատնտեսությանը հասցված վնասի նախնական չափը կազմում է շուրջ 1,5 մլն դոլար:

«Լրաբերը» շարունակում է «հաղթարշավը»

Հնչիսի՞ արագություն, ինչիսի՞ թափ, բառակույտերի ինչիսի՞ հեղեղ է թափվում հաղորդումը վարողի բերանից, վերջակետ չկա, ստորակետ չկա, դադար չկա, մարդը շնչահեղձ է լինում: Ասես փախչում, ձեռից գնում է մեր անկախությունը, պետք է բռնել, ասես ինչոր գերբնական ուժ հրամայում է՝ արագ, ավելի արագ, էլ ավելի արագ: Մեկդ է մահացել՝ վիշտ է, հանդիսություն է եղել՝ ուրախություն է, բայց երկուսին էլ անհաղորդ է հաղորդավարը, աչքերում ոչ վիշտ է հայտնվում, ոչ ուրախություն, անարտահայտիչ, դատարկ-դատարկ աչքեր մեր ամենօրյա էկրանին: Ուրախ ու տխուր լուրերի արանքում գոնե մի ստորակետ հայտնվեր, խոսելու տոնը մի ինչ փոխվեր:

Էկրանը՝ ծիշտ եւ ծիշտ «ժամանակաչափից» փոխանցված: Ասում են, չէ՞, որ հոգին անմահ է, եւ մարմնական մահից հետո մի կենդանուց փոխանցվում է մյուսին: Օրինակ, Ամերիկայում շատերը գիտեն, որ էն աշխարհում հեռավոր անցյալում, մեկը ձի է եղել, մեկը՝ կով, մեկը՝ կոկորդիլոս եւ այլն: Հիմա «Լրաբերը» կարող է ասել, որ էն աշխարհում ինքը «ժամանակաչափ» է եղել, նրա հոգին փոխանցվել է իրեն, հոգու հետ նաեւ անտրամաբանությունը, խոսելու ոճը, արագությունը, գաղափարը, ավելի ծիշտ անգաղափարայնությունը, որովհետեւ իշխանավորներին կուտորեն սպասարկելը գաղափար չէ: Փոխանցվել է նաեւ արջի ծառայություն մատուցելու «տաղանդը»: Հանգուցյալը նման ծառայություն մատուցեց նախագահական ընտրություններում, իսկ նրա ժառանգորդ «Լրաբերը» իր շնչահեղձությա՞ն, թե՞ հոգեվարքի մեջ նման ծառայություն է մատուցում անկախության «հաստատմանը», ժողովրդավարության «հաղթանակին» եւ իշխանական աթոռների «ամրապնդմանը»:

Բա կեղծիքները: Միայն մեկ օրինակ: Ազատության հրապարակ, ապրիլի 18, ժամը 18, խոսում է Պարույր Հայրիկյանը: Ներկա եղածները գիտեն, որ գոնե այդ պահին հրապարակը ծայրից-ծայր ու նաեւ երբակա ծառուղիները լիքը ժողովուրդ էր, կամ, ինչպես «Լրաբերը» կասեր՝ ամբոխ: Նույն օրը, ժամը 20-ն անց 30 րոպե, «Լրաբերի» էկրան, խոսում է Պ. Հայրիկյանը: Այդ պահին՝ հրապարակը ծայրից-ծայր լիքը պահին, նկարված հարցազրույց է, ու խոսողի թիկունքում միայն ծառեր են ու հասուկենս մարդիկ: Պարոնայք, այնտեղ ներկա եղած հինգ, տասը կամ քսան հազար մարդիկ համոզվում են, հարեւան-բարեկամի էլ պատմում, որ ձեր ցուցադրածը սուտ է: Դեռ կան մտածող մարդիկ, ու նրանք մտածում են՝ եթե իրենց տեսածը կեղծված է, ուրեմն ամեն ինչ սուտ է:

Մեր կյանքը երկատված է՝ «Լրաբերի» կյանք եւ իրական կյանք: Սովորական մարդը քայլում է, լսում է, տեսնում է իրական աշխարհը, երեկոյան գալիս է տուն, նայում էկրանին, ուրիշ աշխարհ է՝ պալատական-կառավարական եռուզեռ, իրար հաջորդող հյուրեր, հանդիպումներ, զրույցներ, իշխանավորների եւ իշխանամետների ելույթներ: Գոռը իրականությունից՝ ոչ մի նշույլ, բազմահազար գործազուրկներից՝ ոչ մի տեսարան: Ներքեւում՝ անգործություն, մի կերոր ձեռք բերած բնակարաններ էժան վաճառք, արտագաղթ, իսկ վերեւում՝ հայկական եթերում իր «հաղթարշավն» է շարունակում «Լրաբեր» կոչված այլմոլորակային ծրագիրը:

ՄԻՀԱՐ ՊԱՊԻԵՎՅԱՆ

«Կամքը» Կոտայքի մարզային թերթ

ՀՐԱԶԴԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. Լույս տեսավ Կոտայքի մարզի «Կամք» թերթի առաջին համարը: Գլխավոր խմբագիր Գագիկ Վարդանյանը հայտնեց, որ այն անկախ շաբաթաթերթ է, հրատարակվում է Հրազդանում, տպագրվում Աբովյանում, տպաքանակը 1000 օրինակ:

Հայաստանում չկա ջրի վարձերի հավաքագրման մեխանիզմ

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ՓԱՍՏ. Այսօր հանրապետությունում չկա խմելու եւ ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման մեխանիզմ: Համաձայն ՀՀ ԱԺ ֆինանսատնտեսական եւ բյուջետային մշտական հանձնաժողովի նախագահ Ս. Եղիազարյանի՝ այս առումով վիճակը շտկելու համար անհրաժեշտ է իրականացնել հանգամանքի սեփականաշնորհում: Ըստ նրա, այսօր օգտագործած էլեկտրաէներգիայի դիմաց ամենամեծ դարձերը տանեն խմելու եւ ոռոգման ջրի օգտագործողներ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

հարցազրույց

Էնո Բարկեր. Ուտոպիա է, թե Ղարաբաղը կարող է դառնալ միջազգայնորեն ճանաչված անկախ պետություն... կամ էլ որ Հայաստանի բաղկացուցիչ մասը կլինի

Գերմանիայի արտգործնախարարության առաջին խորհրդական, Կովկասյան եւ Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար դոկտոր Էնո Բարկերից հարցազրույցի համար ժամադրություն խնդրելիս նախապես ասել էինք, թե հայ լրագրողին ինչ հարցեր են այսօր առավել հետաքրքրում: Առավոտյան նա մեզ (ինձ, «Ազգի» լուսանկարչին ու թարգմանչին) իր քարտուղարի հետ դիմավորեց արտգործնախարարության առաջին հարկում եւ սիրով ուղեկցեց բուֆետ: «Տաք սուրճը մեր զրույցին չի խանգարի, ժպտաց առաջարկեց դիվանագետը, պատուհանից երեւացող Բոննի մեղմ տեսարանին ծանոթացնելով սա 7 լեռների երկրանն է, աջ կողմում Բունդեսթագն է, մյուսը Ֆեդերալ նախագահի նստավայրն է: Եթե զրույցն անհետաքրքիր լինի, կարող եք Հռենոսի ջրերին նայել»: Անհետաքրքի՞ր, թե՞... թեպետեւ երբեմն-երբեմն մեր զրուցակցի դեմքին ժպիտ էր հայտնվում, բայց հակված չէինք մտածելու, որ ահա՝ ուր որ է հայ մարդուն ուրախացնող որեւէ տեսակետ է հայտնվելու: Ընդհակառակը մեզ մտատանջողն այս անգամ ոչ միայն Հայաստանի ռազմական տեսակետից մեկուսացման տխուր փաստն էր... այլ որ հայ մարդու երազներն էլ եվրոպական մկրատով պիտի ձեւավորվեն: (Գերմանացիներից ժամադրություն խնդրելը երկար ափսաանք է պահանջում, ինչի համար ընորհակալ ենք Գերմանիայում ՀՀ դեսպանատնից):

ի դեկտեմբերին, երբ Գերմանիայի արտգործնախարար Քինկելն այցելեց Երեւան: Այնուհետեւ կարեւորում ենք պայմանագրային հարաբերությունների զարգացումը, արդեն մի քանի պայմանագիր կնքել ենք, մյուսների վերաբերյալ բանակցություններ ենք վարում: Հայ-գերմանական կապերի համար կարեւոր է նաեւ տնտեսական հարաբերությունների զարգացումը:

– Կա՞ն խոչընդոտներ:

– Իհարկե, կան: Մենք դեռ դարաբաղյան հարցին կանդրադառնանք, այդ պատճառով էլ առայժմ սահմանափակվում եմ ասելով, որ այն ամենամեծ խոչընդոտներից է հարաբերությունների զարգացման համար, քանի որ այնքան էլ նորմալ չէ, երբ մենք հարաբերություններ ենք զարգացնում մի երկրի հետ, որը հակամարտության մեջ է իր հարեւան երկրի հետ:

– Որո՞նք են երկու երկրների զարգացման հետագա ուղիները:

– Ինչպես արդեն ասացի, մեր քաղաքական հարաբերությունները տարիների ընթացքում ավելի ինտենսիվ կդառնան, նույնքան ինտենսիվ կդառնան նաեւ տնտեսական, մշակութային հարաբերությունները: Շատ բան չպահանջենք այդ հարաբերություններից, չպետք է մոռանանք, որ անկախ հարաբերությունների սոսկ վեցերորդ տարում ենք գտնվում:

– Մենք դեռ կանդրադառնանք Ձեր ակնարկած պատճառներին: Հիմա՝ մոտ ապագայում սպասվո՞ւմ են երկու երկրների պետական քաղաքական խոշոր գործիչների փոխայցեր, պայմանագրերի ստորագրում եւ այլն: Անցյալ տարի խոսվում էր Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ Գերմանիա այցի մասին: Փետրվարին ՀԺ-ում Գերմանիայի դեսպան տիկին Հոլբֆեմփերը, հասակ ժամկետներ չկարողացավ նշել, չնայած ասաց, որ այցը տեղի կունենա: Այն ուժի մե՞ջ է:

– Որոշակի ժամկետներ չկան: Իհարկե, ինչ-որ ժամանակ այդպիսի այց կլինի: Թե դա կլինի՞ մոտ ապագայում, կախված է ղարաբաղյան հակամարտության լուծումից: Ինչ վերաբերում է տիկին Կարոլա Մյուլլեր Հոլբֆեմփերի հայտարարությանը, ապա այն լիովին հասկանալի է, որովհետեւ դեսպանի ամենամեծ պարականություններից մեկը հենց երկու երկրների հարաբերությունների զարգացման ապահովումն է: Այդ տեսակետից այցի հեռանկարներն ուժի մեջ են: Թե երբ կլինի, առայժմ հստակ ժամկետներ չկան: Հակված չենք այն տեսակետին, որ այդպիսի այցելություններն են միայն հարաբերություններին նոր որակ հաղորդում:

– Գերմանիայի արտգործնախարար Կլաուս Քինկելը ողջույնի ուղերձ հղեց ապրիլի 1-ին ԼՂ հարցով Մոսկվայում սկսված բանակցությունների հերթական փուլի կապակցությամբ եւ հավաստիացրեց, որ իր երկիրն ակտիվորեն աջակցելու է այդ տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացին: Ինչպե՞ս: Ինչպիսի՞ գործնական քայլեր է մտադիր անել այդ ուղղությամբ:

– Այն, ինչ տեղի ունեցավ 1997-ի ապրիլի 1-ին, բավականաչափ զայրույթ շարժող երկար ամիսների դադարից հետո, բանակցությունների նոր փուլի վերսկսումն էր (սկիզբը 1992-93-ին էր) Մինսկի խմբի շրջանակներում, որտեղ կային նաեւ նոր համանախագահներ: Մինսկի խմբին (որ ԵԱՀԿ օրգան է) անդամակցումը կամավոր հիմունքներով է, եւ Գերմանիան անդամակցող փոքրաթիվ ակտիվ երկրներից է: Մենք այն ակտիվիստների թվին ենք պատկանում, որոնք լուծումներ են փնտրում, եւ հենց այդ պատճառով մտածեցինք, թե լավ գաղափար է, որ մեր արտգործնախարարը ուղերձով դիմի հասարակայնությանը: Ես շատ ուրախ եմ, որ այդ կոչը Ձեր ուշադրությանն է արժանացել: Դուք հարցրեցիք, թե կոնկրետ ինչ նկատի ուներ պրն Քինկելը «գերմանական աջակցություն» ասելով: Ձեզ երեւի չի զարմացնի, եթե ասեմ, որ ուղերձի մեջ չկային այնպիսի բաներ, որոնք առաջ էլ մենք չէինք ասել: Մեր դերը Մինսկի խմբում այնքան ենք կարեւորում, որ արտգործնախարարությունում ունենք հատուկ հանձնարարությունների գծով դեսպան, որը մշտապես զբաղվում է դրանով: Սա ինքնին հասկանալի չէ, դա մեզ համար կադրային շեղություն է, որ թույլ հնք տալիս, անհրաժեշտ նկատելով Մինսկի խմբում բանակցային գործընթացի եւ մեր դերի հույժ կարեւորությունը: Վերոհիշյալ հատուկ հանձնարարությունների գծով դեսպանը դոկտոր Ֆրանկ Լամբախն է, որը Հայաստանում շատ ճանաչված է, քաջ հայտնի նաեւ ՀՀ ղեկավարությանը: Նա մտադիր է առաջիկայում եւս այցելություններ կատարել տարածաշրջան, խոսել երկրների ղեկավարների հետ, որ նկատառումներ հայտնվեն, թե զանազան առանձին հարցերի լուծման համար ինչ տարբերակներ կարելի է առաջարկել: Առաջիկայում եւս ակտիվորեն կմասնակցենք Մինսկի այդ խմբի աշխատանքներին, մասնավորապես կոնկրետ հարցերի լուծման վերաբերյալ կներկայացնենք նաեւ մեր առաջարկությունները: Ինչպես, օրինակ, Լաչինի միջանցքի կարգավիճակը, անվտանգության երաշխիքները եւ այլն: Առաջիկայում եւս մեր պարտքը կհամարենք հակամարտող կողմերին ներկայացնել գրավոր առաջարկություններ եւ սպասել նրանց տեսակետներն այդ հարցերի վերաբերյալ: Սա այն է, ինչ որ մենք կարող ենք անել, ինչը չենք կարող անել հակամարտող կողմերի փոխարեն՝ հակամարտությունը լուծելն է: Սպասնում ենք միայն երկրորդական դեր, առաջնայինը հակամարտող կողմերի կամքն է՝ փոխզիջումներ հասնել:

– Որո՞նք են Գերմանիայի կոնկրետ հետաքրքրությունները տարածաշրջանում:

– Մենք չունենք կոնկրետ հետաքրքրություններ այն իմաստով, որ մենք գերադասություն չենք տալիս հակամարտության մեջ գտնվող 2 պետություններից որեւէ մեկին: Մենք ոչ Հայաստանի, ոչ էլ Ադրբեջանի հատուկ բարեկամը կամ հովանավորողը չենք, այլ բարեխղճորեն ջանում ենք չեզոք մնալ եւ, կարծում եմ, որ հակամարտության լուծման համար ջանքեր գործադրելիս դա առավելություն է: Հայերը մտավախություն չունեն, որ Գերմանիան ադրբեջանամետ դիրքորոշում ունի, նմանապես Ադրբեջանը Գերմանիային չի մեղադրում, թե հակվածություն ունի դեպի Հայաստանը: Այսինքն, մենք չունենք կոնկրետ հետաքրքրություններ այն իմաստով, թե այդ պետություններից որեւէ մեկի դաշնակիցն ենք կամ էլ այն իմաստով, որ Ամդրկովկասը դիտարկում ենք որպես մեր ազդեցության գոտի: Այս առիթով կուզենայի նշել, որ Գերմանիան ընդհանրապես դեմ է այն հայեցակետին, թե որեւէ տարածաշրջան կարող է լինել որոշակի պետությունների ազդեցության գոտի: Կարծում եմ, որ մեր հետաքրքրությունը կարելի է ավելի շուտ մեկնաբանել որպես տարածաշրջանում խաղաղության ապահովում: Գերմանիան իր ազգային՝ գերմանական շահագրգռվածությունից ելնելով ցանկանում է, որ այն տարածաշրջաններում, որոնք աշխարհագրական եւ քաղաքական առումով մոտ են Գերմանիային, լարվածությունը թուլացվի եւ խաղաղություն հաստատվի: Նախկին Հարավսլավիայում հակամարտությունները որոշ առումով վերահսկվում են, եւ մենք այդ տարածաշրջանում այլեւս չենք փորձում պատերազմը կանխել, այլ զբաղվում ենք ձեռք բերված համաձայնությունների կիրառմամբ: Մենք վերադառնում ենք աշխարհագրական տեսակետից հաջորդ՝ ավելի մոտ տարածաշրջանին՝ Կովկասին, որտեղ շատ հակամարտություններ կան: Դրանից հետո՝ անդրկովկասյան տարածաշրջանը՝ հակամարտության մի այնպիսի գոտի, որն աշխարհագրական առումով Գերմանիային ամենամոտն է:

– Գերմանիան էլ է պաշտպանում «լայն իրավունքներով ինքնավարության» սկզբունքը, որի մասին վերջերս շատ է խոսվում, եւ որը դարաբաղցիներին չի բավարարում: Հայաստանում շատերն այն կարծիքն են հայտնում, թե դա՝ լայն ինքնավարությունը, «լայն գերեզմանափոս է»: Գերմանիան հստակ պատկերացում ունի՞, թե «լայն ինքնավարություն» ասվածի գործուն մեխանիզմները որոնք են, եւ թե ինչպես պիտի ապահովվի դարաբաղցիների անվտանգությունն այդ պայմաններում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ տարածաշրջանի խաղաղությունն ու կարգավորումը Ձեզ համար կարեւոր նպատակ են:

– Ձեզ կարծում, թե մենք ի վիճակի ենք որոշակի հայեցակետեր ներկայացնելու ԼՂ կարգավիճակի մասին, չեմ էլ կարծում, թե պետք է դա անենք: Սակայն որեւէ հակամարտության խաղաղ լուծման համար կան որոշակի բաղադրամասեր, որոնք անհրաժեշտորեն պիտի պահպանվեն, մենք սեփական քաղաքական փորձառությունից ելնելով ենք այդպես կարծում, քանզի առանց այդ բաղադրամասերի որեւէ կարգավորում չի կարող երկարաժամկետ լինել: Հենց այդ պատճառով էլ ամենից առաջ այդ բաղադրամասերից մեկը տարածային ամբողջականության սկզբունքն է, որը դուք չնշեցիք, եւ ես գիտեմ, որ հայերն այդ սկզբունքը չեն էլ սիրում: Տարածային ամբողջականությունը բնականաբար Լեռնային Ղարաբաղի համար էֆեմիզմ (մեղմասացություն) է: Այսինքն, դա նշանակում է, որ վարչական տեսակետից Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին, եւ այդ սկզբունքը չպետք է փոփոխել: Ես կարծում եմ, որ ոչ Երեւանում, ոչ Ստեփանակերտում որեւէ մեկը ուտոպիաների գիրկը չպետք է ընկնի: Ուտոպիա է խոսել այն մասին, թե Լեռային Ղարաբաղը կարող է լինել կամ դառնալ միջազգային հանրության կողմից ճանաչված անկախ հանրապետություն: Նույնպես ուտոպիա է կարծել, թե Լեռային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մասն է կամ կարող էր լինել, կամ կլինի: Հետպատերազմյան Եվրոպայում, մասնավորապես Կենտրոնական Եվրոպայում մենք այն փորձառությունն ունեցանք, որ չափազանց վտանգավոր է հին խնդիրները լուծելու փոխարեն նոր լարվածություն առաջացնել, փորձ անել սահմաններ փոփոխելու: Սա ենք հենց հասկանում տարածային ամբողջականություն ասելով, բայց դրանից անմիջապես հետո գալիս է այն, ինչ նշեցիք ամենալայն ինքնավարության սկզբունքը: Տարածային ամբողջականության սկզբունքը հարաբերական է դառնում ամենալայն ինքնավարության սկզբունքի միջոցով: Թե դրա տակ ինչ պետք է հասկանալ, պիտի պարզաբանեն իրենք՝ հակամարտող կողմերը բանակցությունների միջոցով: Գերմանիան կամ էլ Մինսկի խումբը հակամարտող կողմերին չպետք է պարտադրի այդ բանաձեւի իմաստը: Եվրոպայում կան ինքնավարության զանազան կառուցվածքների բազմաթիվ օրինակներ, որոնք շատ լավ գործում են: Վերցնենք հենց Գերմանիայի օրինակը, որը դաշնակցային պետություն է, բաղկացած է 16 երկրամասերից, որոնք ինքնավարության բարձր աստիճան ունեն: Բնականաբար, Գերմանիայի փորձառությունից որոշ բան կարելի է պատճենել: Երկրամասերն ունեն իրենց սեփական կառավարությունը, սահմանադրությունը, խորհրդարանը, սահմանադրական դատարանը, սեփական ոստիկանությունը: Նրանք չունեն սեփական բանակ եւ դրամ: Շատ սահմանափակ է արտաքին քաղաքականություն վարելու իրավունքը: Չափազանց սահմանազատված են այն բնագավառները, որտեղ իրավունք ունեն սեփական օրենքներ ընդունելու: Կան, օրինակ, օրենսդրական ոլորտներ, որտեղ միայն երկրամասերն ունեն օրենսդրության հանար իրավասություններ, կան նաեւ ոլորտներ, որտեղ միայն կենտրոնական դաշնակցային կառավարությունն ունի այդ իրավասությունը, կան նաեւ խաչաձեւվող բնագավառներ, որտեղ թե կենտրոնականը, եւ թե երկրամասերն ունեն օրենսդրական իրավասություններ: Այս ամենը հստակ կարգավորված եւ ամրագրված է մեր Սահմանադրության մեջ:

– Թույլ տվեք կրկնել, որ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում, շատերի կարծիքով, լայն ինքնավարությունը լայն գերեզմանափոս է: Այս դեպքում երաշխիքներ կա՞ն ղարաբաղցիների անվտանգության պահպանման գործում: Եվրոպան, Գերմանիան խաղաղության պահպանման եւ անվտանգության կոչ են անում, կարո՞ղ են այդ դեպքում երաշխիքներ առաջարկել:

– Ես դեռ անվտանգության երաշխիքների մասին չխոսեցի: Իմ՝ ֆեդերացիայի վերաբերյալ ասածում չէի ցանկանում պարզապես նշել, որ պետք է կոնկրետ պատճենել գերմանական օրինակը: Իմ ասած միայն այն է, որ կան կառուցվածքներ, եւ գերմանական օրինակը դա հաստատում է, որտեղ մի որեւէ պետական միավորի բնակիչները (լինի դա Բավարիան կամ էլ Լեռնային Ղարաբաղը) կարող են իրենց զգալ այդ պետության միավորի քաղաքացի: Գանք անվտանգության հարցին: Կներեք, ես չեմ կարծում, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության այդ բանաձեւի վերաբերյալ տեղին է նման՝ գերեզմանափոսի հետ համեմատություն անելը: Հայերը երբեմն շատ են հակվում դեպի սեւ ճակատագրապաշտությունը (ֆատալիզմը): Բնականաբար, կան հնարավորություններ ԼՂ բնակչությանը արտաքին սպառնալիքի դեմ անվտանգության երաշխիքներով ապահովելու: 1994-ին Բուդապեշտի գագաթաժողովում ԵԱՀԿ-ն հայտարարեց, որ ինքը պատրաստ է այդպիսի երաշխիքներ տալ: Այդպիսի անվտանգության երաշխիքներ կան Եվրոպայում այլ պետությունների եւ տարածքների համար: ԵԱՀԿ-ն իր գոյության 22 տարիների ընթացքում լուրջ ու գործուն օրգան է դարձել: Նա աշխարհի հակամարտության տարբեր գոտիներում (եւ ոչ միայն Եվրոպայի) ցույց է տվել, որ ինքն ի վիճակի է զբաղվելու հակամարտություններով եւ դրանց լուծումներ գտնելով: Դա նշանակում է, որ եթե ցանկանում են հակամարտության լուծում գտնել, ապա չպետք է ասեն, թե ԼՂ ողջ բնակչությունը կոչնչանա, այլ պետք է ասեն, որ մենք ցանկանում ենք համաձայնության գալ եւ իմանալ, որ այդպիսի համաձայնության դեպքում անվտանգության երաշխիքները կոնկրետ ինչ տեսք կստանան:

Կուզենայի նշել, որ Տաջիկստանում էլ կա ԵԱՀԿ դիտորդների խումբ, եւ 1994-ի դեկտեմբերին Բուդապեշտի գագաթաժողովում որոշվեց, որ եթե Լեռնային Ղարաբաղի հակամարտող կողմերը ցանկություն ունեն այդ կոնֆլիկտը լուծելու քաղաքական ճանապարհով, ապա ԵԱՀԿ-ն պատրաստ է դիտորդների մի այդպիսի խումբ ուղարկել նաեւ Ղարաբաղ: Վիեննայում ԵԱՀԿ-ն ունի կոնկրետ անվտանգության երաշխիքներ տալու ծրագրեր՝ ներառյալ ԵԱՀԿ դիտորդների խումբ առաքելը Լեռնային Ղարաբաղ: Այս ամենը, սակայն, մի պայմանով, որ ինչպես դա որոշեց Բուդապեշտի գագաթաժողովը 94-ին, եթե հակամարտող կողմերը համաձայնության գան հակամարտության լուծման վերաբերյալ: Մեկ անգամ եւս ուզում եմ նշել, որ հաշվի առնելով ԵԱՀԿ-ի անվտանգության այդպիսի երաշխիքներ տալու սկզբունքային պատրաստակամությունը, որեւէ մեկը իրավասու չէ հայտարարելու, թե հնարավոր չէ հակամարտությունը լուծել, քանի որ անվտանգության պակաս կա: Հաջորդականությունը հակառակը պետք է լինի: Եթե հակամարտող կողմերը իրենց կամքն են արտահայտում հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ, դրանից հետո ԵԱՀԿ-ն պատրաստ է այդ անվտանգության պակասը վերացնել:

– ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ՀՀ վարչապետի պաշտոնում նշանակվելը տարբեր երկրներում տարբեր արձագանք ստացավ: Գերմանիայում ինչպե՞ս ընկալվեց:

– Մենք հավատում ենք պետությունների ինքնիշխանությանը, որի մեջ մտնում է, որ դուք ցանկացած մարդու կարող եք պետության վարչապետ դարձնել, եւ մենք դա շատ հանգիստ ընկալեցինք:

– Խոշոր տերությունները վերջերս մտահոգություն են արտահայտում Հայաստանի հետագա ներքին քաղաքական զարգացման վերաբերյալ: Գերմանիայի վերաբերմունքն ի՞նչ է: Մանավանդ հարցազրույցի սկզբում Դուք անդրադարձաք քաղաքական ալեբախումներին:

– Ես շատ զգուշավոր եմ Հայաստանի ներքին քաղաքականությանը գնահատական տալուց, քանի որ ինքս անկախ դիտող կամ գիտնական չեմ, այլ Գերմանիայի կառավարության ներկայացուցիչ, եւ ընդունված է, որ մի երկրի կառավարությունն մի ուրիշ երկրի կառավարության ներքին քաղաքականությանը գնահատական չի տալիս: Կարող եմ՝ սահմանափակվել միայն հետեւյալն ասելով, մենք մտահոգությամբ ենք հետեւում համեմատաբար լիբերալ ներքին քաղաքական իրավիճակից դեպի ավելի կարծր կուրս որդեգրելու բոլոր փորձերին: Մտահոգվում ենք նաեւ, որ արդարադատությունը քաղաքական միջոցների համար է օգտագործվում: Նկատի ունեմ նաեւ Ձեր թերթի դեմ տեղի ունեցած դատավարական գործընթացը, որին ուշադրությամբ հետեւեցինք:

– Շնորհակալություն, որ անտարբեր չեք եղել՝ մեր թերթի հետ կապված պատմությանը: «Ազգը» կարեւորում է Գերմանիայի հետ մեր հարաբերությունները, եւ Ձեզ հետ մեր առաջին հարցազրույցը, կարծում ենք, հետաքրքրությամբ կընթերցվի:

ԱՆԱՍՏԱՍ ՏՈՒՄԱՆՅԱՆ,
Բոնն

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

«Բաղաքացիական պատերազմ»: Այսպես է որակել պահպանողական կուսակցության ներսում վերջին շրջանում ծայր առած պառակտումը լիբերալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ Պեդդի Ասդաունը:

«Երկու պահպանողական կուսակցություն կա այժմ եւ Մեյջորն ի վիճակի չէ կառավարելու դրանցից ոչ մեկը», ավելացրել է լեյբորիստական կուսակցության առաջնորդ՝ գլխավոր ընդդիմադիր Թոնի Բլերը:

Իսկ ո՞րն է պառակտման պատճառը: Ո՞ր բնագավառում են թորիներն (ինչպես նրանց անվանում են իրենք՝ անգլիացիները) անհամաձայն միմյանց հետ. տնտեսությո՞ւնը, կրթությո՞ւնը, թե՞ առողջապահությունը: Ջարմանալիորեն ոչ մեկում, ոչ էլ մյուսում:

Պատճառը պետք է փնտրել «բունելից» այն կողմ՝ եվրոպայում: Ամբողջ հարցը եվրոպական միասնական դրամանիշին Անգլիայի մասնակցության շուրջն է պտտվում:

Մեյջորի խորհրդականների բնութագրմամբ՝ «ընտրաբավի ամենորոշիչ պահերից մեկի»՝ անցյալ շաբաթ կայացած մամուլի ասուլիսի ընթացքում ներկայիս վարչապետը հայտարարել է. «Անկասկած սա որեւէ կառավարության առաջ երբեւէ դրված ամենակարեւոր հարցն է»:

Նա համոզիչ ու կարեկցական խոսքեր է արտասանել քսան րոպե խոսելով, բայց... արդյունքն ոչինչ չի կարողացել ավելացնել իր «սպասողական» այն քաղաքականությանը, որն արդեն ամիսներ շարունակ հետեւողականորեն վարում է:

Եվրո միասնական դրամանիշին միանալ-չմիանալու հարցը այնքան է իրարից հեռացրել կուսակցության անդամներին, որ կարծես խոպոպ ջնջել է Մեյջորի երրորդ անգամ ընտրվելու եւ դրանով պահպանողականների 18 տարվա իշխանությունը երկարացնելու ամեն մի հնարավորություն: Նույնիսկ մայիսի 1-ին կայանալիք ընտրություններում հաղթանակ արձանագրելու ձգտումը չի զգաստացրել «այլախոհներին», որոնց թվում են Մեյջորի կառավարության երիտասարդ նախարարները: Մինչեւ անցյալ շաբաթ օրը, ըստ «Թայմզ օֆ Լոնդոնի» տվյալների, 647-ից 282 պահպանողական թեկնածուներ դեմ են արտահայտվել Մեյջորի «սպասողական» քաղաքականությանը, պաշտոնապես հայտարարելով, որ «Բրիտանիան դուրս պետք է մնա միասնական դրամանիշին մասնակցելու ամեն մի ծրագրից»:

Պահպանողական կուսակցության ազդեցիկ մարդիկ, այնուամենայնիվ, փորձել են հոգուս իրենց շրջել «եվրոպական» այս հիմնահարցը, բերբերում ծավալելով հակաբլերական արշավ, որտեղ լեյբորիստական կուսակցության առաջնորդը ներկայացված է որպես անփորձ «բրիտանական մի շնիկ» Լա Մանշից այն կողմ գտնվող փորձառու «վաս տղաների» գրկում: «Պատանուն մի ուղարկեք տղամարդու գործ կատարելու», գրել են նրանք հսկա Քոլի գրկում փոքրիկ Բլերին ներկայացնող ծաղրանկարի տակ:

Լեյբորիստները նման հարձակումն անվանել են «ստածմլիկ», սակայն այն իրոք ծառայում է նպատակին, քանի որ Բլերն է «ծարտարապետը» այն նոր լեյբորիստական շարժման, որն ավելի շատ համախոհներ է հավաքում բրիտանացիների շրջանում: Բլերի խորատակումով կխորտակվի նաեւ պահպանողական կուսակցության վրա կախված սպառնալիքը: Անշուշտ լրագրային արշավանքը պարզապես «թեթեւ տարբերակն» էր մարտավարների կողմից մշակված ավելի լուրջ ծրագրի, որ նախատեսում էր Մեյջոր-Բլեր մենամարտին տալ ռազմական-քաղաքական բնույթ, առաջ քաշելով երկրի անվտանգության եւ ինքնիշխանության հարցերը եւ նախազգուշացնելով ընտրողներին, որ երկրի վաս կառավարման դեպքում եվրոպական ինտեգրացումը միայն վնաս կբերի կայսրությանը: Միտքը պարզ է: Նրանք ցանկանում էին Մեյջորին ներկայացնել որպես «գլխավոր բանակցողի»: Բայց Մեյջորը չի կարողանում իր կառավարության մի քանի հարյուր անդամներին կառավարել կամ նրանց հետ «բանակցել»: Այս անկարողությունն էլ հարցականի տակ է դնում նրա հեղինակությունը, որն այնքան թույլ է հանվել, քան մինչեւ 50-ական թվականները», հաստատում է գրքերի հեղինակ Անթոնի Սամպսոնը: Երկիր է մուտք գործում ավելի շատ կապիտալ: Եվրամիության մեջ ամերիկյան եւ ճապոնական ներդրումների 40 տոկոսը Բրիտանիայում է: Բայց, իհարկե, եվրոպայի հետ հարաբերություններում Թեչերի ցանած «մարտահրավերի» սերմերը խորը արմատներ տալով՝ այսօր սպառնում են փլուզել պահպանողական կուսակցությունը: 18 տարվա ընթացքում ավելի է մեծացել սոցիալական տարբերությունը. հարուստներն ավելի են հարստացել, աղքատները՝ աղքատացել: Անօթեւան մարդկանց հարմարին տալ ռազմական-քաղաքական բնույթ, առաջ քաշելով երկրի անվտանգության եւ ինքնիշխանության հարցերը եւ նախազգուշացնելով ընտրողներին, որ երկրի վաս կառավարման դեպքում եվրոպական ինտեգրացումը միայն վնաս կբերի կայսրությանը: Միտքը պարզ է: Նրանք ցանկանում էին Մեյջորին ներկայացնել որպես «գլխավոր բանակցողի»: Բայց Մեյջորը չի կարողանում իր կառավարության մի քանի հարյուր անդամներին կառավարել կամ նրանց հետ «բանակցել»: Այս անկարողությունն էլ հարցականի տակ է դնում նրա հեղինակությունը, որն այնքան թույլ է հա-

ԱՆԳԼԻԱ

Պահպանողականներն ընդդեմ պահպանողականների

Մեյջոր-Բլեր ընտրապայքարում... Թեչե՞րն է հաղթանակելու

Անգլիայում այսօր մայիսի 1-ին անցկացվելու են ընտրություններ, որոնք կարող են ճակատագրական լինել 18 տարի անընդմեջ իշխանության ղեկը վարած պահպանողական կուսակցության համար: Մեյջոր-Բլեր ընտրապայքարը սուր բնույթ է ստանում հատկապես վերջին շրջանում պահպանողական կուսակցության ներսում առաջացած պառակտման հետեւանքով: Դիտորդների կարծիքով, պառակտումը ընդդիմադիրներին ընծայված լավագույն նվերն է: Դա պատճառ է դարձել, որ հարցումների արդյունքներում 22 միավորով առաջ անցնի Բլերի գլխավորած լեյբորիստական կուսակցությունը: «Նյուզուիքի» ապրիլի 28-ի համարից թարգմանաբար հաղորդում ենք հետեւյալ տեղեկությունները:



մեմասած նրա նախորդի՝ «երկաթյա լեդիի» հեղինակության հետ:

Եթե արդյունաբերական հեղափոխությունը վաղուց մոռացության է տրված, թեչերյան հեղափոխությունը դեռ թարմ է մարդկանց հիշողության մեջ: Ինչ էլ լինի ընտրությունների արդյունքը, պատմաբանները թեչերյան շրջանը հիշելու են բացառապես որպես ազատ ու՝ բարգավաճ հասարակության մեջ հարստանալու հնարավորությունների շրջան: Նրա ստեղծած պետությունում արդյունաբերությունը համարյա ամբողջովին սեփականաշնորհվեց, արհմիությունները խայտառակվեցին, իսկ նրա վարած սոցիալական քաղաքականությունն ավելի շատ պահանջներ էր դնում անհատի վրա, քան պետության: Լավ էր, թե վատ՝ այլ հարց է, բայց սա էր Թեչերի ստեղծած Բրիտանիան, եւ աշխարհը գիտի այդ մասին: Տեխնոլոգիական առաջընթացն ու համաշխարհային մրցակցությունը նոր հնարավորություններ բացեցին ազատ շուկայի քաղաքացիների առաջ եւ Թեչերն առաջիններից եղավ, որ օգտվեց դրանցից խիստ վճռականորեն:

Յոթանասունմեկ տարեկանում բարոնուհի Թեչերն այսօր էլ նույնքան աշխույժ կյանք է վարում, ինչքան առաջ: Նրա դասախոսություններին Միացյալ Նահանգներում եւ ասիական երկրներում դեռեւս մեծ թվով ունկնդիրներ են ներկա լինում: Բայց չափազանցված կլիներ ասել, որ Մեյջորի կողմին երեւալը ընտրարշավի օրերին կարող է փրկել պահպանողականների խունացած հեղինակությունը: 80-ականներին Բրիտանիան ուժի եւ իշխանության երկիր էր: Թեչերն ասել էր. «Ես պատրաստ եմ մի մտադրությամբ. փոխել Բրիտանիան, նրան կախյալ վիճակից դարձնել ինքնաբավ. «Տվեք-ինձ» տիպի երկրից՝ «ինքդ-ստեղծիր» տիպի երկիր»: Եվ էլերը կարող են չհամաձայնել, որ նա իրոք հասավ իր նպատակին:

Սեփական տներում ապրող բնակչության տոկոսով (68 տոկոս) Անգլիան այժմ գերազանցում է ոչ միայն եվրոպական երկրներին, այլեւ նույնիսկ ԱՄՆ-ին: Փաստ է, որ տնտեսությունը լավ վիճակում է, «առնվազն ավելի ցը դեռեւս մնում է ցավոտ խնդիր: Բայց Թեչերին հաջողվեց նաեւ խայտառակել կամ թուլացնել ընդդիմությունը (այդ ժամանակ՝ Նիլ Քինոքի առաջնորդությամբ): Լեյբորիստներին սովորաբար նեցուկ կանգնող արհմիությունները չկան այլեւս, այնպես որ նույնիսկ հաղթանակի դեպքում դժվար է լինելու նրանց ճանապարհը:

Ճիշտ է, մեծ մասամբ համընկնում են երկու կուսակցությունների առաջարկած պլատֆորմները, սակայն որոշ կետեր տարբերվում են: Լեյբորիստներն առաջարկում են, օրինակ. ա) հանրաքվեի միջոցով ստեղծել խորհրդարան եւ ազգային ժողով համապատասխանաբար Շոտլանդիայում եւ Ուելսում, բ) վերջ տալ լորդերի պալատի ժառանգական բնույթին, գ) ստեղծել սննդամթերքի անկախ ծառայություններ սպառողների լայն շրջանակների համար, դ) վերջնականապես արգելել ատրճանակների սեփականությունը, ե) կրճատել վառելանյութի հարկը, զ) սահմանել նվազագույն աշխատավարձի չափ, է) ընդունել շաբաթական 48-ժամյա աշխատանքային ռեժիմ եւ ը) հանրաքվեով ընտրել Լոնդոնի քաղաքագլուխ (ներկայումս պարզապես պատվավոր պաշտոն է):

Լեյբորիստների հաղթանակը, եթե տեղի ունենա, ավելի շատ վերագրվելու է պահպանողական կուսակցության ներսում ծագած պառակտմանը, քան իր (լեյբորիստական կուսակցության) ուժեղ բնույթին: Այն վերագրվելու է պահպանողականների ինքնագոհությանը: Նրանք այնքան են բարգավաճել, որ կարող են թույլ տալ լեյբորիստներին գեթ մեկ անգամ ասպարեզ դուրս գալ: Գուցե հետագայում ամբողջապես նրանց քայքայելու նպատակով:

Այնպես որ անկախ իրական արդյունքից, նախատեսվում է, որ Թեչերն է (կամ թեչերականությունը) հաղթանակելու վաղվա ընտրություններում: Պահպանողականներից մեկը մի անգամ կշտամբելով Մեյջորին՝ ասել էր. որ կարծես նրա կառավարությունը պատրաստի գլխին է, բայց ոչ իշխանության: Մինչդեռ Թեչերը ե՛ւ պատրաստի գլխին էր, ե՛ւ իշխանության

ՇՐՋԱՆ

Հունաստանը դարձյալ ընդդիմանում է Թուրքիային տրվելիք օժանդակություններին

ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ, 30 ԱՊՐԻԼ. ՓԱՍՏ: Չնայած եվրոպական միության անդամ մի շարք պետությունների ճնշումներին, ապրիլի 29-ին Հունաստանի արտաքին գործոց նախարար Թեոդորոս Պանգալոսը հայտարարեց, թե Աթենքը շարունակում է ընդդիմանալ 1995-ից ի վեր Թուրքիային խոստացված օժանդակությունները հանձնելու գաղափարին, որովհետեւ Անկարան իր հերթին շարունակում է հարցականի տակ առնել Էգեյանում գտնվող հունական կղզիների պատկանելությունը ու սպառնում է հարձակվել Հունաստանի եւ Կիպրոսի վրա:

Լյուքսեմբուրգում կայացած Եվրոպական միության արտաքին գործերի նախարարների նիստի ընթացքում կատարված այս հայտարարությունը նշանակում է, թե նույն օրն այստեղ ժամանած Թուրքիայի արտաքին գործերի նախարար Թանսու Չիլլերը մեկ անգամ եւս ձեռնունայն է վերադառնալու Անկարա:

Եվրոպական միության եւ Թուրքիայի միջեւ ստորագրված մաքսային միության համաձայնագրով Միությունը 424 միլիոն դոլար էր խոստացել Թուրքիային, բայց Աթենքը ցարդ հաջողել է արգելել այդ գումարի տրամադրումը:

Պանգալոսը հայտարարել է նաեւ, թե Թուրքիան պետք է ընդունի ծովային սահմանները ընդարձակելու Հունաստանի իրավունքը եւ միջազգային օրենքների հիման վրա լուծի հողային տարակարծությունները:

Ռուսաստանը մինչեւ հունիս 1 մլրդ դոլարի վարկ կստանա

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 30 ԱՊՐԻԼ. ՓԱՍՏ: Վաշինգտոնյան իր այցն ավարտող Անատոլի Չուբայսը հայտարարեց, որ արդեն մինչեւ հունիս Ռուսաստանը 1 մլրդ դոլարի վարկ կստանա: Այստեղ նա հավաստիացումներ է ստացել, որ Ռուսաստանի մուտքը Փարիզյան ակումբ եւ Առեւտրի համաշխարհային կազմակերպություն համադարձակ օժանդակության կարժանանա: Այսօր Չուբայսի ղեկավարած պատվիրակությունը վերադարձավ Մոսկվա:

Պյատիգորսկի պայթյունը կազմակերպել էին երկու չեչեն կանայք

ՄՈՍԿՎԱ, 30 ԱՊՐԻԼ. ՓԱՍՏ: Պյատիգորսկի երկաթուղային կայարանում տեղի ունեցած պայթյունի կազմակերպման մեղադրանքով կալանվել է երկու չեչեն կին, որոնք արդեն խոստովանել են իրենց մեղքը: ՌԴ ներքին գործերի նախարար Կուլիկովի խոսքերով, նրանք 1995 թվականի ամռանը մասնակցել են նաեւ Բուդյոնովսկի արյունալի դեպքերին: Պատշգամբական Գրոզնին մերժում է բոլոր մեղադրանքներն ու պատասխանատվությունն ամբողջովին դնում է դաշնային կենտրոնի վրա: Միաժամանակ, Հյուսիսային Կովկասում ուժեղացվում է անվտանգության ռեժիմը: ՆԳ ներքին զորքերը Չեչնիայի սահմանի երկայնքով բերվել են մարտական պատրաստակամության: Չի բացառվում, որ դա արվել է Չեչնիայի սահմանի հնարավոր փակման նպատակով՝ բնչը վրադարձրի Չեչնիայի ղեկավարությունը ապրուստ ստանալու երկրամասեր: Վիկտոր Չերնոմիրդինը, որ գտնվում է Ստավրոպոլում, Պյատիգորսկի պայթյունն անվանեց վանդալիզմի դրսեւորում: Ընդհանուր դերձ, Բրատիսլավայում հրավիրած ասուլիսում նա ընդգծեց, թե դա որեւէ կերպ չի անդրադառնա դաշնային կենտրոնի եւ Չեչնիայի միջեւ համաձայնագրի նախապատրաստական աշխատանքների վրա:

Խոշոր երկաթուղային աղեղ Չինաստանում

ՊԵԿԻՆ, 30 ԱՊՐԻԼ. ՓԱՍՏ: Չինաստանի պատմության մեջ խոշորագույն երկաթուղային աղեղներից մեկը գրանցվեց ապրիլի 29-ին Խունան նահանգում: Ավելի քան 90 մարդ զոհվել է, 300-ը վիրավորվել: Ողբերգության պատճառ է դարձել երկու մարդատար գնացքների բախումը: Աղեղի վայրում աշխատում են փրկարարական խմբերը, բժիշկներ ու տեղական ոստիկանության ուժերը:

Ռուսն ու ամերիկացին առաջին անգամ բաց տիեզերքում միասին

29 ԱՊՐԻԼ. BBC. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» Ռուսաստանի տիեզերական թռիչքների կառավարման կենտրոնից հաղորդեցին, որ այսօր առաջին անգամ միասին բաց տիեզերք են դուրս եկել ռուս եւ ամերիկացի տիեզերագնացները «Միր» տիեզերական կայանի անձնական անդամներ Վասիլի Տրեբլովը եւ Ջերի Լինինգերը: Հաղորդվում է, որ նրանք բաց տիեզերքում աշխատել են շուրջ 5 ժամ: Նրանք մասնավորապես ռադիացիայի չափման սարքեր են տեղադրել կայանի արտաքին մասում: «Միր»-ը այսօրվա դրությամբ միակ տիեզերակայանն է, որն ընդունում է տիեզերագնացներին: «Միր»-ը շահագործվում է արդեն շուրջ 11 տարի:

Վրեժխնդրություն դատարանում

ՄՈՍԿՎԱ, 30 ԱՊՐԻԼ. ՓԱՍՏ: Վրեժխնդրության քայլը քիչ էր մնում, որ արդյունավետ դառնար Պետրոզավոդսկ Կամչատկի քաղաքային դատարանում ապրիլի 28-ին ընթացող դատական նիստի ժամանակ: Մեկ տարի առաջ սպանված 14 ամյա Կարինե Խանսիլդյանի մայրը նիստի ժամանակ TT ատրճանակից կրակեց մեղադրյալ Օլեգ Միտոնի վրա: Ամբաստանյալը վիրավորվեց ու տեղափոխվեց հիվանդանոց: Վրեժխնդիր կինը կալանքի տակ է առնվել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Սամվել Սեւադա. Երեւանը խնամքի կարիք ունի

Երեւանի քաղաքաշինարանի կառույցում ստեղծվել է նոր գլխավոր նկարչի բաժին. քաղաքի գլխավոր նկարիչ է նշանակվել Սամվել Սեւադան: Բաժինն ստեղծելու անհրաժեշտությունն ու դրա գործունեության երջանակները դարձելու նպատակով Արմենպրեսի թղթակիցը զրուցեց Սամվել Սեւադայի հետ:

«Նախեւառաջ, վերջերս տարածված ամեն տեսակ խոսակցություններին վերջ տալու համար, նշեմ, որ քաղաքաշինարանի մշակույթի բաժինը թողել եւ նկարչի բաժին եմ տեղափոխվել իմ ցանկությամբ, ասաց նա: Ինձ ավելի հոգեհարազատ է այս «ճակատի» աշխատանքը: Երեւան քաղաքի արտաքին տեսքն այսօր հուսահատեցնող է, այդ հարցով պետք է լրջորեն զբաղվել: Օրվա հոգսերի ծանրության տակ երեւանցիներս մոռացել ենք, թե ինչ է մաքուր ու գեղեցիկ քաղաքը»:

«Շրագրերն ու աանելիքները շատ են, շարունակեց Սամվել Սեւադան»: Սկսել ենք քաղաքում տեղադրված անթիվ գովազդներից: Հաշվառվել են գովազդային աղբյուրների տարածքները, ով ինչ ունեցել է առանց քաղաքաշինարանի հետ համաձայնության, փակցրել է որտեղ պատահի: Գովազդային տարածքների համար սահմանվել են նոր գներ: 1քմ-ի համար 27-ից մինչեւ 9 դոլար՝ ըստ տեղադրման վայրի (քաղաքը բաժանվել է հատուկ նշանակության 5 գոտիների) իսկ նախկինում եղել է 5.70 դոլար: Չափավորման կարիք ունի նաեւ արտասահմանյան ֆիրմաների գովազդների մուտքը: Գովազդման հնարավորություն տալով նաեւ տեղական կազմակերպություններին: Այսպես, օրինակ, արտասահմանյան մի ընկերություն ուզում է 300 վահանակ տեղադրել, իսկ դա նշանակում է քաղաքը դարձնել այդ ֆիրմայի գովազդակիր»:

Ս. Սեւադայի կարծիքով, պիտի վերահսկվի ամեն տեսակ ազդագրերի ու հայտարարությունների տեղադրումը: Մինչեւ հիմա դա իրականացնում էր «Երքաղտեղեկամ» ձեռնարկությունը: Նախնական պայմանավորվածության համաձայն այն պիտի անցնի գլխավոր նկարչի բաժնի ենթակայությանը: Բոլոր ընկերություններն ու կազմակերպությունները, նախքան իրենց ազդագրերը տեղադրելը, պետք է դրանց էսքիզները համաձայնեցնեն մեր բաժնի հետ: Դա հնարավորություն կտա վերահսկել լեզվական ձեւակերպումներն ու գունային լուծումները: Եվ վերջապես քաղաքում կլինեն ազդագրերի եւ հայտարարությունների հատուկ կետեր: Ասեմ, որ ավտոտեսուչները բողոքում են, որ ոչ ճիշտ տեղերում փակցված ազդագրերն ու գովազդները խանգարում են երթեւեկությանը:

Քաղաքի գլխավոր նկարիչը գտնում է, որ օրինակ թերթի բոլոր կրպակները պետք է լինեն նույն գույնի: Միանման ցուցանակներ կառաջարկվեն (արդեն պատրաստվում են դրանց էսքիզները) դեղատներին, հացի խանութներին, լիցքավորման կետերին եւ այլն: Մի խոսքով, աշխատանքները շատ են, քաղաքի համար պետք է անհանգստանան բոլորը: Մենք նամակով դիմել ենք ԱԱ եւ ՆԳ նախարարությանը, որ արգելվի կեղտոտ մեքենաների երթեւեկությունը քաղաքում: Դիմել ենք նաեւ տրանսպորտի նախարարությանը, որ ներկվի եւ պատշաճ տեսքի բերվի քաղաքային տրանսպորտը: Նկարահանել ենք քաղաքը, եւ այդ նյութերը պարբերաբար կօգտագործվեն հեռուստատեսային հաղորդումների ժամանակ, որպեսզի բոլորը տեսնեն ու համոզվեն, որ Երեւանը խնամքի կարիք ունի: Նորաստեղծ բաժնի հիմնական նպատակը, վերջում ասաց Ս. Սեւադան, մաքուր ու խնամված քաղաք ունենալն է: Քանի միջավայրը կամա թե ակամա ազդում է բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

«Անգլիացի հիվանդը»՝ սիրո եւ անհատականության յուրահատուկ խորհրդածություն

Հոլիվուդյան ոչ մի կինոստուդիա չի համաձայնվել նկարահանել այդ ֆիլմը՝ եկամտաբեր չլինելու պատճառաբանությամբ: Առհասարակ ոչ ոք չի պատկերացրել, որ Մայքլ Օնդաթջիի «Բուքեր Պրայս»-ի մրցանակին արժանացած լիրիկական եւ երգային վեպը կարելի է վերածել ֆիլմի: Այն լի է սիրո, անհատականության եւ պատերազմի վերաբերյալ խորհրդածություններով: Գրված է բացառիկ պոետիկ լեզվով եւ իմպրեսիոնիստական ոճով: Գործողությունները ծգվում են երկրորդ համաշխարհային պատերազմի օրերի Իտալիայից մինչեւ Հյուսիսային Աֆրիկայի անապատները, եւ պարզապես խիզախություն էր ռեժիսոր դարձած անգլիացի դրամատուրգ Էնթոնի Մինգելայի համար վեպի էկրանավորումը: Նա խոստովանում է, որ մի շնչով է կարդացել վեպը եւ անմիջապես որոշել, որ այն անպայման ֆիլմի պետք է վերածի: «Ընկերներիցս շատերն ինձ խնդրեցին, որպեսզի դրա էկրանավորումը չէր հարմարվում որեւէ ընդունված ձեւի մեջ», ասում է նա: Մինգելային հաջողվեց նկարահանել ֆիլմը եւ տալ վեպի իր յուրահատուկ մեկնաբանությունը: Հիանալի զգալով վեպի արանքում թաքնված սիրո պատմությունը՝ նրան հաջողվել է խելամտորեն դուրս բերել այդ սերն իր թախտոցից: «Անգլիացի հիվանդը», ըստ «Նյուզուիքի», միաժամանակ եւ հնաոճ սիրային պատմություն է՝ լի լրտեսական, մարտական տեսարաններով, եւ ժամանակակից հետաքրքրական գլուխկոտրուկ՝ լի անակնկալներով, ինչպես, ասենք, ինչպես պիտի լինի ժամանակագրական կարգը խիստ խախտված է Հանդիսատեսը, ինչպես նաեւ ընթերցողը, անընդհատ պետք է հետեւի իրադարձություններին եւ կարդատի ներկայի եւ անցյալի միջեւ:



Սկզբում Տոսկանայում (Իտալիա) լքված մի մենաստան է պատկերվում, որտեղ երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին կանադացի մի բուժքույր խնամում է ծանր այրվածքներ ստացած «անգլիացի հիվանդին», որի ինքնությունը Սահարայում խփել էին գերմանացիները: Շուտով նրանց են միանում Կարավաջիոն՝ կանադացի մի ավազակ, որն աշխատում է հոգուս դաշնակից զորքերի եւ Կիրը՝ ականներ հայտնաբերող մի մասնագետ, որն ամեն օր մահվան հետ է առնչվում փորձելով ականազերծել տարածքը: Ահա այս ֆոնի վրա հյուսվում են սիրո, հավատարմության եւ դավաճանության պատմությունները, որոնցից ամենահուզիչն ու ամենագրավիչը, անշուշտ, «հիվանդի» եւ արիստոկրատ տիկնոջ սիրո պատմությունն է, որն «ավերիչ հետեւանքներ» է ունենում ինչպես անձնական, այնպես էլ քաղաքական բնագավառներում: Նրանց առորինի սիրուն հակադրվում են սիրո այլ դրսեւորումները՝ բուժքույր Հանայի նվիրվածությունը իր «հիվանդին» եւ Ալմասիի սերը՝ հանդեպ անապատի:

Ավելացնենք, որ գրի հեղինակ Մայքլ Օնդաթջին Շրի Լանկայում ծնված կանադացի է, որի հետ ռեժիսորն անընդհատ խորհրդակցել է ֆիլմի նկարահանումների ընթացքում: «Էնթոնին պետք է «խանդեր» գիրը, ֆիլմի վերածելու համար, բայց արդյունքն ինձ դուր եկավ: Զգացմունքներն ու հուզականությունը հարազատ են մնացել», նշում է նա: Ռեժիսոր Մինգելան, մյուս կողմից, ասում է, որ գիրքն իրեն հետաքրքրել է առաջին հերթին արտաքին բնավորություններով, նրանով, թե ինչպես հախուռն նվիրվածությամբ նրանք սիրում, օրհնում, բուժում եւ նաեւ խորտակում են միմյանց:

Ֆիլմի պրոդյուսերն է Սոլ Զաենցը, որը մեզ ծանոթ է «Թռիչք կկվի բների վրայով» եւ «Ամադեուս» ֆիլմերով: Ալմասիի դերը կատարում է Ռալֆ Ֆիենսը, որի հիանալի դերակատարումը «Շինդլերի ցուցակը» ֆիլմում համաշխարհային ճանաչում բերեց նրան: Արիստոկրատ Քլիֆթոնի տիկնոջ դերակատարը՝ Քրիստին Սքոթ Թոմասը, անհագ հափշտակությամբ երեք անգամ անընդմեջ կարդացել է գիրքը: «Պարզապես չէի կարողանում պոկվել գրքից», խոստովանում է նա: Բուժքրոջ դերը վստահված է Ֆրանսուազ Ժուլիետ Բինոշին, որին մենք վերջերս տեսանք «Ամպրոպային լեռնանցք» ֆիլմում, դարձյալ Ռալֆ Ֆիենսի կողքին: Իսկ Կարավաջիոյի դերը՝ Վիլեմ Դեֆոն: հանդիսատեսին ծանոթ է «Քրիստոսի վերջին գայթակղությունը», «Միսիսիպին բռնկվում է», «Դասակ» եւ այլ ֆիլմերից:

Ֆիլմը նկարահանվել է ընդհանուր Միրամաքս Հարվի Ուենստեյն ֆիրմայի 27.5 միլիոն դոլարի ներդրումի, որին Զաենցը ավելացրել է եւս 6 միլիոն:

Տեսնենք, թե երբ հնարավորություն կունենանք դիտելու այս ժապավենը:

Հ. Ե.

ՅՈՒՅՇԱՀԱՆԴԵՍ

«Լույս, որ անցնում է տաղապանքի միջով»

Այս օրերին Երվանդ Քոչար թանգարանում գործում է քանդակագործուհի Մարիամ Հակոբյանի աշխատանքների անհատական ցուցահանդեսը, որ բացվել է ապրիլի 18-ին եւ կշարունակվի մինչեւ մայիսի 6-ը: Մարիամ Հակոբյանը կին արվեստագետների «Կոբալտ» միջազգային միության հայաստանյան մասնաճյուղի նախագահն է: Մասնակցել է Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Լեհաստանում, Նորվեգիայում, Գերմանիայում, Իտալիայում եւ այլ երկրներում կայացած մի շարք ցուցահանդեսների, Հայաստանի տարբեր քաղաքներում տեղի ունեցած քառ քանդակի միջազգային սիմպոզիումների: 1990-ին եւ 1996-ին ընդգրկվել է Իտալիայի Ռավենա քաղաքում անցկացվող ամենամյա բիենալեներում, 96-ի բիենալեում նրա աշխատանքը («Քավարանի դարպասներ») արժանացել է բրոնզե մրցանակի: Քանդակագործուհու մոնումենտալ քանդակները տեղ են գտել Հայաստանի եւ Ռուսաստանի քաղաքների հրապարակներում, փոքր ծավալի քանդակները՝ տարբեր երկրների թանգարաններում եւ մասնավոր հավաքածուներում: Երեւանյան ցուցահանդես-վաճառքում ներկայացված նմուշներում (գերազանցապես բրոնզե 44 քանդակներ, դեղաքարշնավոր, սեւ եւ նարնջագույն երանգներով հագեցած մոտ 20 գրաֆիկական աշխատանքներ) ակնառու է խոհը, որոնումը, երեւույթների ներաշնչական, խորքային ընկալումը: Հակոբյանի ֆիգուրներն ամենից հաճախ հիպատ խոյացման «հոգեվիճակում են», ինչպես քանի, որ ստացի մեջ է նույնանուն գործում կարծես փորձելով որսալ ինքն իրեն: Այլ քանդակներ մարմնավորում են սերը, մայրությունը:

Քանդակագործուհուն հուզում են, երբ կարելի է այսպես ասել, «հիշողություններն ապագայի մասին». նրա գործերում առկա է օտար քաղաքակրթությունների թեման («Մարդը երկնից», «Հյուրը», «Ճանապարհ», «Խայտառակ», «Եկվոր» եւ այլն): Ուշագրավ է նաեւ աստվածաշնչյան ընկալումների վերարտադրությունը («Ավետում», «Երկնի դարպասները», «Քավարանի դռների մոտ» եւ այլն): «Մենք գալիս ենք այս աշխարհը՝ փաստելու մեր մեջ ամփոփված լույսը սիրո եւ գնում այն տաղապանքի միջով...», քանդակագործուհու նախընտրած այս բնաբանը, թերեւս, լավագույնս արտահայտում է ցուցահանդեսի ոգին:

ԼՈՒԻԶ ՊՈՂՈՍՅԱՆ

Կին արվեստագետների ցուցահանդես՝ մայիսի 21-ից

Մայիսի 21-ին կին արվեստագետների «Կոբալտ» միջազգային միության հայաստանյան մասնաճյուղի նախաձեռնությամբ Երվանդ Քոչար թանգարանում կբացվի ցուցահանդես, որտեղ կներկայացվեն մոտ 20 հայ կին արվեստագետների գեղանկարչական, գրաֆիկական աշխատանքներ, քանդակներ, կցուցադրվեն բաճկի (նկարչություն կտորի վրա) հետաքրքիր նմուշներ: Ցուցահանդեսի անվանումը («Սկիզբ») խորհրդանշական է: արվեստասերն առիթ կունենա ծանոթանալու «Կոբալտի» շարքերը համալրած արվեստագետների գործերին: Ս. Պ.

Հայ երիտասարդները կարող են կրթվել Հունաստանի բուհերում

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը եւ Հայաստանում Հունաստանի դեսպանությունը հայտարարում են մրցույթ, որի հաղթողները հունական կողմի օժանդակությամբ բարձրագույն կրթություն կստանան Հունաստանի բուհերում: Մրցույթի մասնակիցները ռուսերենից բացի պետք է տիրապետեն առնվազն մեկ օտար լեզվի եւ մինչեւ մայիսի 7-ը նախարարության արտաքին կապերի վարչությանը ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը. հասունության ատեստաս տեղական ընդհանուր միջին գնահատականի մասին (20 բալանոց սանդղակով): ծննդյան վկայական եւ անձնագրի կրկնօրինակ: 2 երաշխավորագիր: մրցույթին մասնակցելու դիմում նշելով նախընտրելի մասնագիտության 3 մասնաճյուղ: Հետաքրքրվողները կարող են դիմել 58-95-26 հեռախոսահամարով:

Մայիսյան հիշարժան օրագույց

Հրայր ԲՈՒՆԻԱԹՅԱՆ
(1.5.1907-19.3.1981)
կենսաֆիզիկոս, 90-ամյակը

Գրիգոր ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ
(4.5.1887-1969)
հոգեբույժ, 110-ամյակը

Խաղաղության օրը
(9.5.1945)

Ալեքսեյ ՀԵՔԻՄՅԱՆ
(10.5.1927-24.4.1982)
կոմպոզիտոր, 70-ամյակը

Հրայր ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
(12.5.1937)
արձակագիր, լրագրող, 60-ամյակը

Երեւանի պետական ասոդադիտարանը
(16.5.1937)
հիմնադրման 60-ամյակը

Գուրգեն ՋԱՆԻԲԵԿՅԱՆ
(18.5.1897-27.9.1978)
դերասան, 100-ամյակը

Երեւանի բուսաբանական այգին
(21.5.1937)
հիմնադրման 60-ամյակը

Գուրգեն ԱԼԵՄՇԱՀ
(22.5.1907-14.12.1947)
կոմպոզիտոր, խմբավար, դիրիժոր, 90-ամյակը

Երեմիա ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆ
(Երեմիա Չելեբի)
(22.5.1637-1695)
պատմագիր, բանաստեղծ, 360-ամյակը

Մարգարիտ ԲՐՈՒՏՅԱՆ
(23.5.1922)
երաժշտագետ, 75-ամյակը

Ռուբեն ԱՅԱՐՈՆՅԱՆ
(24.5.1947)
ջութակահար, 50-ամյակը

Քրիստափոր ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
(25.5.1897-1942)
զինվորական գործիչ, 100-ամյակը

ՍԻՐԱՆՈՒՇ
(Մերուժան Քանքարջյան)
25.5.1857-1932
դերասանուհի, 140-ամյակը

Համլետ ՎԱՐԳԱՆՅԱՆ
(26.5.1927)
ֆիզիկոս, 70-ամյակը

Ֆրունզե ԴՈՎԼԱԹՅԱՆ
(26.5.1927)
կինոռեժիսոր, դերասան, 70-ամյակը

Ավետիք ԵՎԴՈԿԱՑԻ
(1657-1711)
մատենագիր, 340-ամյակը

«Մշակ» հասարակական-քաղաքական, գրական օրաթերթ
(1872-1921)
լույս ընծայման 125-ամյակը

Հայկական պետականության վերածնունդը
(28.5.1918)

Գարեգին ԽԱՉԱԿ (Չագալյան)
(1867-1915)
հրապարակախոս, հասարակական-քաղաքական գործիչ, 130-ամյակը

ՇԻՐԻՆ
(Հովհաննես Կարապետյան)
(1827-1857)
աշուղ, 170-ամյակը

Ժորժ (Տիրան) ԿԱՌՎԱՐԵՆՑ
(1932-21.3.1993)
ֆրանսահայ կոմպոզիտոր, 65-ամյակը

Կազմեց
ՏՊԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

«ՖՐԱՆՍԻԱ-98»

Հայաստանի հավաքականի հերթական ոչ-ոին

Մեկ շաբաթից մեր ֆուտբոլիստները Կիևում կհանդիպեն Ուկրաինայի հավաքականի հետ

Երկար ընդմիջումից հետո Հայաստանի ֆուտբոլի հավաքականը կրկին Երևանում ներկայացավ հայրենի ֆուտբոլասերներին: «Հրազդան» մարզադաշտում մեր ֆուտբոլիստները երեկ ուժերը չափեցին հյուսիսիռլանդացիների հետ:

Խաղից առաջ

Այս հանդիպմանը բոլորն էին անհամբերությամբ սպասում: Ընդհանրապես մթնոլորտը հավաքականի շուրջ Թբիլիսիում կրած ջախջախիչ պարտությունից հետո, մի տեսակ լարված էր: Օրակարգի կարևոր հարցերից էր արդյո՞ք մեր ֆուտբոլիստները կարճ ժամանակահատվածում ուշքի են եկել այն հարվածից և կկարողանա՞ն ապացուցել որ Վրաստանի մայրաքաղաքում տեղի ունեցածը սոսկ ճակատագրական հանգամանքների ընթացք էր: Խաղը դրական պատասխան տվեց այդ հարցերին և դա կրկին հույս է ներշնչում հայ ֆուտբոլասերներին: Խաղից առաջ երկու թիմերի մարզիչներն էլ չէին թաքցնում իրենց մտահոգությունը, կապված մի շարք առանցքային խաղացողների վնասվածքների և այլ պատճառներով մրցամարտին չմասնակցելու հետ: Միաժամանակ թե Բրայան Համիլթոնը և թե Խորեն Հովհաննիսյանը չէին թաքցնում որ իրենց սաները խաղադաշտ են դուրս գալու մեկ նպատակով հաղթել: Այնպես որ հանդիպումից առաջ արդեն որոշակի ինտրիգ կար:

Խաղը

Հանդիպման սկիզբն ավելորդ ապահովագրություն պարզեցին որ թիմերը բաց ֆուտբոլ են ցուցադրելու: Հյուսիսիռլանդացիների առաջին գոհը խափանվելուց հետո հայ ֆուտբոլիստները վստահորեն առաջ գնացին հասկացնելով մրցակցին որ չեն պատրաստվում նստել պաշտպանությունում: Առաջին վտանգավոր հարվածը մրցակցի դարպասին կատարեց Կարապետ Միխայելյանը, որն ի դեմ Հայաստանի հավաքականի միակ ֆուտբոլիստն էր որ միշտ գոհի առաջին գծում էր: Իսկ այն պահերին երբ մեր ֆուտբոլիստները պաշտպանվում էին նա հերթապահում էր դաշտի կենտրոնում: Հաճախ մեր թիմի գոհին էր միանում նաև Էրիկ Ասադուրյանը: Հենց այս երկու ֆուտբոլիստներն էին որ անընդհատ սփոթում էին հյուսիսիռլանդացի պաշտպաններին զգոն լինել: Ի տարբերություն Հայաստանի հավաքականի, Հյուսիսային Իռլանդիայի թիմի հարձակման գծում աչքի էին ընկնում երեք խաղացողներ: Մակֆարսնին, Քուինը և Լենոնը: Ընդ որում, առաջին խաղակեսի կեսից Մակֆարսնին, որ գործում էր ձախից և աջ եզրից աշխատող Քուինը փոխվեցին տեղերով, քանի որ նրանց ջանքերը շրջանցել իրենց հակող պաշտպաններին գրեթե միշտ անարդյունավետ էին լինում: Բայց հայտնի իրողություն է, որ գոմարելիների տեղափոխումից գոմարը չի փոխվում: Իսկ մինչ այդ 12-րդ րոպեին Քուինը, ներխուժելով տուգանային հրապարակ, գնդակն ուղարկեց Բերեզովսկու դարպասը: Ճիշտ է նախապես խախտելով խաղի կանոնները: Այնպես, որ գոլը մրցավարը արդարացիորեն չհաշվեց: Բարեբախտաբար, այդ պահից լուրջ հետևություններ արեցին հայ պաշտպանները:

Աստիճանաբար մեր ֆուտբոլիստներն ավելի աշխուժացան և ավելի վստահորեն էին առաջ գնում: Սակայն գոհերը դանդաղ էին կազմակերպվում ինչը հնարավորություն էր ընձեռում մրցակցին արագ համախմբել ուժերը: Նման իրավիճակի պատճառը մեր թիմի միջին գծի խաղացողների թույլ խաղն էր: Ընդհանրապես ժամանակ առ ժամանակ տպավորություն էր ստեղծվում թե Հայաստանի հավաքականում կիսապաշտպանական գիծն պարզապես բացակայում է: Մեր թիմի գոհերը կազմակերպվում էին հետևյալ սկզբունքով: պաշտպանները խորից ուժգին փոխանցումով փորձում էին հարվածի դուրս բերել առջևում գտնվող ֆուտբոլիստներին, որոնք տուգանային հրապարակի մատույցներում տիրելով գնդակին փորձում էին զանազան հնարքներով ազատվել իրենց հետապնդող պաշտպաններից: Ճիշտ է ոչ հաճախ էր դա հաջողվում: Բանգի Ֆիզիկական առումով մեր ֆուտբոլիստներ զգալիորեն զիջում էին հյուսիսիռլանդացիներին: 30-րդ րոպեին մեր ֆուտբոլիստներին հաջողվեց արագ տեղաշարժումների շնորհիվ անակնկալի բերել մրցակցին: Համլետ Մխիթարյանը հայտնվելով նպաստավոր դիրքում հարվածեց, սակայն գնդակը «ետ մղեց» ձողափայտը, իսկ վրա հասած Կարապետ Միխայելյանը երկրորդ հարվածով գրավեց դարպասը: Գլխավոր մրցավարը գրանցեց դարպասի գրավում, սակայն նրա օգնականը խաղից դուրս վիճակ արձանագրեց և Նիլսենը փոխեց որոշումը: Մեր ֆուտբոլիստներին չընկճեց մրցավարի նման որոշումը, այլ ընդհակառակը կարծես թե նոր լիցք հաղորդեց և այլևս մինչև առաջին խաղակեսի ավարտը նրանք չզիջեցին առավելությունը:

Երկրորդ կեսը ևս սկսվեց Հայաստանի հավաքականի բուռն գոհերով: Մեր թիմն արդեն փոխել էր խաղաոճը: Հայ ֆուտբոլիստներ պայքարի մեջ էին մտնում դաշտի կենտրոնում և հաճախ հաղթող դուրս գալով, սուր և արագ երթերով դեպի հակառակորդի դարպասը անակնկալի բերում Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի պաշտպաններին: Այդ պահին էր որ Խորեն Հովհաննիսյանը խաղադաշտ մտցրեց Արսեն Ավետիսյանին: Այս թեթև և արագաշարժ հարձակվողը դաշտում հայտնվելու առաջին րոպեներին պարզապես ֆրթրեց

ՀԱՅԱՍՏԱՆ-ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱ 0-0

30 ապրիլի, Երևան. «Հրազդան» մարզադաշտ, 28 հազար հանդիսական: Գլխ. մրցավար Նիլսեն (Շվեդիա). ՖԻՖԱ-ի տեսուչ Պ. Կազարին (Իտալիա)

ՀԱՅԱՍՏԱՆ-Ռոման Բերեզովսկի, Երվանդ Սուքիասյան, Վարդան Խաչատրյան (ա), Սարգիս Հովսեփյան, Միհել Տեր-Զաքարյան, Արամայիս Եղիազարյան, (Վարդան Մինասյան, 88), Արթուր Պետրոսյան, Գառնիկ Ավալյան, (Արսեն Ավետիսյան, 73), Համլետ Մխիթարյան, Էրիկ Ասադուրյան, Կարապետ Միխայելյան: Գլխավոր մարզիչ՝ Խորեն Հովհաննիսյան

ՀՅ. ԻՌԼԱՆԴԻԱ Ալան Ֆեթիս, Յան Զենինս, Սթիվ Մորրոու, (ա), Քոլին Հիլլ, Գերի Թակգարդ, Սթիվ Լոմաս, Զոն Մակֆարքնի, (Ֆիլիպ Մալոայն, 69), Նեյլ Լենոն, Յան Դոուի, Ջիմի Քուինն (Ջերալդ Մակմահոն, 60), Քելին Հորլոք: Գլխավոր մարզիչ՝ Բրայան Համիլթոն:

Զգուշացում. Երվանդ Սուքիասյան, Յան Դոուի, Սթիվ Լոմաս, Նեյլ Լենոն, Վարդան Խաչատրյան, Արսեն Ավետիսյան:

թույլ խաղն էր: Ընդհանրապես ժամանակ առ ժամանակ տպավորություն էր ստեղծվում թե Հայաստանի հավաքականում կիսապաշտպանական գիծն պարզապես բացակայում է: Մեր թիմի գոհերը կազմակերպվում էին հետևյալ սկզբունքով: պաշտպանները խորից ուժգին փոխանցումով փորձում էին հարվածի դուրս բերել առջևում գտնվող ֆուտբոլիստներին, որոնք տուգանային հրապարակի մատույցներում տիրելով գնդակին փորձում էին զանազան հնարքներով ազատվել իրենց հետապնդող պաշտպաններից: Ճիշտ է ոչ հաճախ էր դա հաջողվում: Բանգի Ֆիզիկական առումով մեր ֆուտբոլիստներ զգալիորեն զիջում էին հյուսիսիռլանդացիներին: 30-րդ րոպեին մեր ֆուտբոլիստներին հաջողվեց արագ տեղաշարժումների շնորհիվ անակնկալի բերել մրցակցին: Համլետ Մխիթարյանը հայտնվելով նպաստավոր դիրքում հարվածեց, սակայն գնդակը «ետ մղեց» ձողափայտը, իսկ վրա հասած Կարապետ Միխայելյանը երկրորդ հարվածով գրավեց դարպասը: Գլխավոր մրցավարը գրանցեց դարպասի գրավում, սակայն նրա օգնականը խաղից դուրս վիճակ արձանագրեց և Նիլսենը փոխեց որոշումը: Մեր ֆուտբոլիստներին չընկճեց մրցավարի նման որոշումը, այլ ընդհակառակը կարծես թե նոր լիցք հաղորդեց և այլևս մինչև առաջին խաղակեսի ավարտը նրանք չզիջեցին առավելությունը:

Երկրորդ կեսը ևս սկսվեց Հայաստանի հավաքականի բուռն գոհերով: Մեր թիմն արդեն փոխել էր խաղաոճը: Հայ ֆուտբոլիստներ պայքարի մեջ էին մտնում դաշտի կենտրոնում և հաճախ հաղթող դուրս գալով, սուր և արագ երթերով դեպի հակառակորդի դարպասը անակնկալի բերում Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի պաշտպաններին: Այդ պահին էր որ Խորեն Հովհաննիսյանը խաղադաշտ մտցրեց Արսեն Ավետիսյանին: Այս թեթև և արագաշարժ հարձակվողը դաշտում հայտնվելու առաջին րոպեներին պարզապես ֆրթրեց հիրարի պաշտպանությունը, իսկ 77-րդ րոպեին կարող էր նաև հաղթական գոլի հեղինակ դառնալ: Ցավոք մոտ տարածությունից նրա հարվածը թույլ ստացվեց և Հիլլը գնդակը դուրս բերեց փնասորեն դասակ դարպասի գծից: Խաղավերջում, հյուրերը կրկին ակտիվացան և կարող էին հասնել հաջողության: Բայց այդ պահերին էլ, ինչպես թերևս և ողջ խաղի ընթացքում, վստահ էր գործում դարպասապահ Ռոման Բերեզովսկին որն էլ, ի դեմ, արժանացավ երկու թիմերի մարզիչների գովեստի խոսքին: Մրցավարի եզրափակիչ սուլոցն արձանագրեց 0-0 հաշիվը: Իսկ մենք նշենք, որ սա այն դեպքն է երբ կարելի է ասել, որ մրցակիցներ ոչ թե մեկ միավոր վաստակեցին այլ կորցրեցին երկուսը:

Խաղից հետո

Կայացած մամուլի ասուլիսում Հյուսիսային Իռլանդիայի հավաքականի ավագ մարզիչ Բրայան Համիլթոնը նշեց, որ հայ ֆուտբոլիստների խաղը զարմացրեց իրեն, քանի որ նրանք ցույց տվեցին բավականին արագ և տեխնիկապես գրագետ խաղ: «Իսկ ձեր դարպասապահը պարզապես հրաշալի էր», եզրափակեց նա: Ինչ մնում է Խորեն Հովհաննիսյանին, ապա նրա կարծիքով մեր ֆուտբոլիստները մրցակցին զիջում էին հիմնականում ֆիզիկական առումով, իսկ միջին գծում գերիշխում էին Հյուսիսային Իռլանդիայի ֆուտբոլիստները: Այնուամենայնիվ, Խ. Հովհաննիսյանը հույս հայտնեց, որ մինչև Ուկրաինայի հավաքականի հետ խաղը, մեր թիմը կկարողանա փոքր ինչ բարելավել խաղային որակները: Իսկ Հայաստանի հավաքականի խփած գոլի վերաբերյալ Խորեն Հովհաննիսյանը նշեց, որ դա 100 տոկոսանոց գոլ էր և մրցավարը պարզապես սխալվեց:

ՀԵՏԵՎ ԽԱՂԱՐԱՐԵՆ.

Ռուսաստան-Լյուքսեմբուրգ	3-0
Իսրայել-Կիպրոս	2-0
Լատվիա-Բելառուս	2-0

ՇԱԽՄԱՏ

Հարություն Հակոբյանը՝ ԱՄՆ-ի տասնակի չեմպիոն

«Արմենիա» թիմը՝ Նահանգների երկրորդ մրցանակակիր

Թենեսիի նահանգի Նաֆվիլ քաղաքում ավարտված ԱՄՆ-ի շախմատի պատանեկան առաջնությունում փայլուն հաջողության հասավ Լոս Անջելեսի «Արմենիա» ակումբի անդամ 16-ամյա Հարություն Հակոբյանը: Շախմատային հրաշալի մարզիչ և կազմակերպիչ Նշան Քեչիշյանի շնորհիվ սանը ԱՄՆ-ի 4300 ուժեղագույն պատանի շախմատիստների մասնակցությամբ անցկացված մրցաշարում հասավ բացառիկ արդյունքի: 7 հնարավորից 7 միավոր և նվաճեց երկրի չեմպիոնի կոչումը: Դրանով իսկ Հակոբյանը սահմանեց ևս մեկ ռեկորդ: տարբեր տարիքային խմբերում նա Ամերիկայի Միացյալ Նահանգների չեմպիոն հռչակվեց արդեն տասներորդ անգամ:

Թիմային հաշվարկում ևս «Արմենիան» հասավ գերազանց ցուցանիշի: Հայ շախմատիստների թիմը, որի կազմում հանդես էին գալիս Հարություն Հակոբյանը, Արփիար Նազարյանը, Ֆելիքս Հակոբյանը և Կարեն (Քեռին) Գորոյանը, գրավեց երկրորդ տեղը առաջ թողնելով միայն Ֆիլադելֆիայի նահանգի ներկայացուցիչներին:

Առանձին տարիքային խմբերում աչքի ընկան Դավիթ Առաբյանը (3-5-րդ տեղեր մանկադարձեզային տարիք), Մինաս Նորդանյանը, Արփիար Նազարյանը, Արսեն Նորդանյանը, Հարություն Քեչիշյանը: «Արմենիայի» տնօրեն Նշան Քեչիշյանը կարող է հպարտանալ նաև նրանով, որ ԱՄՆ-ի առաջնությունում հանդես եկած իր բոլոր 14 սաները տեղ գրավեցին աղջիկների առաջին կեսում:

ԳԱԳԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Ստեղծվեց Համահայկական խաղերի կազմկոմիտե

Երեկ սպորտվարչությունում տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որին մասնակցեցին ՀԲԸՄ Տորոնտոյի մասնաճյուղի նախագահ ՀԲԸՄ Կենտրոնական վարչական ժողովի երիտասարդական միության փոխնախագահ Հրանտ Բարդակչյանը, նույն միության Բելգիայի մասնաճյուղի նախագահ և Կենտրոնական երիտասարդական վարչության Եվրոպայի ներկայացուցիչ Վարդան Քնաջյանը, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների հայկական համայնքների միության ներկայացուցիչ Սիրաս Սիսլյանը, ՀԱԿ Կենտրոնական վարչության կողմից լիազորված ներկայացուցիչ Հարություն Հարությունյանը, ԼՂՀ հանրապետական սպորտվարչության պետ Սերգեյ Դավթյանը, ՀՀ սպորտվարչության պետ Արթուր Գևորգյանը և ՀԱՕԿ-ի գլխավոր քարտուղար Հարություն Յավրյանը: Ինչպես նաև համահայկական խաղերի նախաձեռնող խմբի նախագահ Աշոտ Մելիք-Շահնազարյանը: Բացման խոսքում վերջինս մասնավորապես նշեց, որ երկու օր շարունակ Երևանում անցկացվեց նախաձեռնող խմբի հիմնադիր ժողով, որն անցավ գործնական մթնոլորտում: Ժողովում ստեղծվեց համահայկական խաղերի կազմկոմիտե, որը գլխավորեց Աշոտ Մելիք-Շահնազարյանը: Նա գոհունակություն հայտնեց նման խաղերը վերջապես իրականություն դարձնելու առթիվ: Նրա խոսքերով, համահայկական խաղերը հենց այն կառույցը կլինեն, որը կամուրջ կհանդիսանա սփյուռքի և Հայաստանի հայերի միջև: Հարություն Յավրյանը նշեց, որ մրցումներն անցկացվելու են հիմնականում խաղային մարզաձևերից ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, սեղանի թենիս, թենիս, ինչպես նաև թեթև ատլետիկայի 8 մրցաձևերից: Մրցումներին իրավունք կստանան մասնակցելու բոլոր երկրների հայկական համայնքների միայն հայ մարզիկները, բացառությամբ մի քանի այլ երկրների, որոնց հավաքականներում ընդգրկված կլինեն նաև օտարերկրացի մարզիկներ: Մրցումներ կանցկացվեն նաև տարիքից, որին կմասնակցեն միայն ոչ արհեստավարժ շախմատիստներ (այսինքն նրանք, ովքեր ֆիդեի դասակարգման աղյուսակում չեն ընդգրկված): Այն հարցին թե հնարավոր է արդյոք արհեստավարժ մարզիկների ընդգրկումը համահայկական խաղերի մրցումներում, որոշակի պատասխան այդ հարցին տրված չկա, սակայն հնարավոր է որ հետագայում մեր հռչակավոր հայրենակիցները ևս դուրս գան մրցակցության: Պրն Մելիք-Շահնազարյանը նշեց նաև, որ արտերկրի հայ մարզիկների ժամանման հանգրվանման, ինչպես նաև սննդի հետ կապված բոլոր ծախսերը հոգալու են այդ երկրների հայկական համայնքների ղեկավարները: Այս առումով խաղերը որոշակի եկամուտ կբերեն Հայաստանի Հանրապետությանը, և նախատեսվում է, որ դա կկազմի մոտ 2 մլն դոլար: Նա նշեց նաև, որ երևանյան մրցաշարեզ դուրս կգան 2000-3000 մարզիկներ: Այժմ կազմկոմիտեն դիմելու է Հայաստանի կառավարությանը խնդրելով հաստատել համահայկական խաղերի Երևանում անցկացումը:

Համաժողովի անցկացման ընթացքում մասնակիցները այցելեցին մարզահամերգային համալիր, ծանոթացան այդ կառույցի պայմաններին, ինչպես նաև եղան Մայր աթոռ Ս. Էջմիածնում, որտեղ ստացան արք. Ներսես Պողարյանի օրհնանքը: Ավելացնենք նաև, որ կազմկոմիտեի վերջնական կազմը կորոշվի հոկտեմբերին Երևանում կայացիք համաժողովի ժամանակ:

ՀՐԱՏՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Գերմանացի վարորդների հաղթանակով

«Ֆորմուլա-1» դասի ավտոարշավի աշխարհի առաջնության հերթական փուլն Իտալիայում ավարտվեց գերմանացի վարորդների կրկնակի հաղթանակով: Բոլորից արագ 62 շրջանը հաղթահարեց Հայնց-Հարոլդ Ֆրենցլերը «Ուիլյամս-Ռենո» թիմից: Միայն երկրորդը վերջնագիծ հասնելուց աշխարհի նախկին չեմպիոն Միխայել Շումախերը («Ֆերրարի»): Մրցարշավի վերջնական փուլում նա հաղթողին զիջեց 1.237 վրկ: Շումախերին չհաջողվեց կատարել խոսքումը դառնալ առաջինը մրցուղիում որը կրում է Էնցո Էդիմ Ֆերրարիի անունը:

Այսպիսով, ընդհանուր հաշվարկում առաջատար կանադացի Ժակ Վիլնյովն է (20 միավոր): Նրան հետևում է Միխայել Շումախերը (14 միավոր) իսկ Բերգերը, Կուրհարդտը, Ֆրենցլերը, Հակինենը և Իրվինը վաստակել են 10-ական միավոր:

digitised by A.R.A.R.@

օրվա հետքերով

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ-ն պատրաստ է աղահովելու դիտորդների անվտանգությունը

Ապրիլի 30-ին ԼՂՀ նախագահի դաշտոնակատար վարչապետ Լևոնարդ Պետրոսյանը ընդունեց կարճատև այցով ապրիլի 29-ին ԼՂՀ ժամանած ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին: Զրույցի ընթացքում, որին մասնակցում էր ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը, կողմերը արտահայտվեցին դարաբաղյան կարգավորման գործընթացը առաջ տանելու նպատակով ԼՂՀ ղեկավարության եւ ԵԱՀԿ առաքելության միջեւ փոխհամագործակցության հետագա շարունակման օգտին: Հանդիպման մասնակիցները շոշափեցին հակամարտ կողմերի միջեւ վստահության միջոցառումների ամրապնդման, կողմերի շփման գծի մոնիթորինգ անցկացնելու հետ կապված հարցեր: Այս կապակցությամբ կարծիքներ փոխանակվեցին դարաբաղյան եւ ադրբեջանական զինված ուժերի շփման գծի հարավային հատվածում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ, որի ժամանակ զոհվեցին դակոծության ենթարկվեց ԵԱՀԿ նախագահի ներկայացուցիչ Կասպրշիկի ավտոմեքենան: ԼՂՀ նախագահի դաշտոնակատարը ափսոսանք հայտնեց մոտավորապես երկու շաբաթ առաջ տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ: Լ. Պետրոսյանը Կասպրշիկին հայտնեց, որ հաշվի առնելով այդ հատվածում ադրբեջանական դիվերսիոն խմբի ԼՂՀ տարածք թափանցումը, դարաբաղյան կողմը արտահայտվեց մոնիթորինգի անցկացման անողոքակահարմարության մասին, սակայն ադրբեջանական հրամանատարությունը անտեսեց այս զգուշացումը: Ամենայն հավանականությամբ, դաշտոնական Բաքուն, ԼՂՀ ղեկավարի կարծիքով, ժամանակին չի զգուշացրել ռազմական դիտորդներին, կամ էլ դիտավորյալ կերպով անտեսել է ԼՂՀ ներկայացուցիչների զգուշացումները: Հանդիպման մասնակիցները միակարծիք եղան այն բանում, որ այսուհետ նման միջադեպերից խուսափելու համար անհրաժեշտ է լրացվություն փոխանակել, կատարելագործել մոնիթորինգի ուղղությամբ տեխնիկական միջոցառումները: Լեոնարդ Պետրոսյանը հաստատեց ԼՂՀ զինուժերի վերահսկողության գոտում ԵԱՀԿ առաքելության գործունեության անվտանգությունն ապահովելու ԼՂՀ ղեկավարության պատրաստակամությունը: ԼՂՀ ղեկավարը հավաստիացրել է, որ դարաբաղյան կողմը պատրաստ է ապահովելու շփման գծում ԵԱՀԿ դիտորդների անվտանգությունը:

Նույն օրը տեղի ունեցավ Անջեյ Կասպրշիկի հանդիպումը ԼՂՀ դաշտոնական նախարար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանի հետ, որի ընթացքում շոշափվեցին դարաբաղյան հակամարտության կարգավորման եւ կրակի դադարեցման ռեժիմի պահպանման միջոցառումներին առնչվող լայն շրջանակի ռազմաքաղաքական հարցեր:

Նույն օրը Կասպրշիկը վերադարձավ Երեւան:

ՎԱՀՐԱՄ ԱՂԱՅԱՆ

Լենի Ֆիշերը 10 օր կանցկացնի Անդրկովկասում

30 ԱՊՐԻԼ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» Երեկ Անդրկովկաս ժամանեց Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լենի Ֆիշերը: Նա մինչեւ մայիսի 3-ը կմնա Բաքվում, այնուհետեւ երեք օր կանցկացնի Թբիլիսում եւ մայիսի 6-ին կժամանի Երեւան: Երեք երկրներում էլ Լենի Ֆիշերը հանդես կգա խորհրդարանականների առջեւ, ինչպես նաեւ կհանդիպի բարձրագույն ղեկավարների հետ: Լենի Ֆիշերի Անդրկովկասի հանրապետություններ կատարած 10-օրյա այցի նպատակն է տեղ հասցնել հետեւյալ ուղերձը. «Դադարեցրե՛ք ձեր բոլոր հակամարտությունները, այլապես Եվրոպայի խորհուրդը ձեզ չի ընդունի»: Այդ մասին «Ազատությանը» հայտնել են Եվրախորհրդի պաշտոնյաները:

Ղազախստանի նախագահը հիասթափեցնում է Թուրքիային

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ Ինչպես հայտնում է «Թրքիշ դեյլի նյուզ» օրաթերթը, երկուշաբթի օրը Թուրքիան հայտարարել է, որ «բացասություն» է պահանջել Ղազախստանի իշխանություններից՝ նախագահ Ասկար Ակաեւի այն արտահայտության վերաբերյալ, թե «թուրքերը ցեղասպանություն են իրագործել հայերի նկատմամբ»: Թուրքիայի արտգործնախարարության խոսնակ Օմեր Ամրելը նույն օրը կայացած հերթական մամլո ասուլիսի ժամանակ հայտարարել է. «Մենք խնդրեցինք, պաշտոնական խողովակների միջոցով, բացատրել եւ պարզաբանել տեղի ունեցածը»: Ամրելը, Ակաեւի արտահայտությունն անվանելով «անհաջող», ավելացրել է, որ առ այսօր Ղազախստանի կողմից պատասխան չի ստացվել:

Ադրբեջանցիները ծովային ցույցի ժամանակ այրեցին Հայաստանի դրոշը

ԵՐԵՎԱՆ, 30 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ Թուրքական հեռուստատեսության «6-րդ ալիքը» հաղորդել է, որ Սեւծովյան տնտեսական համագործակցության երկրների խորհրդաժողովի շրջանակներում կայացած Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման ընթացքում ադրբեջանցիները ծովից բողոքի ցույց են կազմակերպել: Ըստ «6-րդ ալիքի», մի խումբ ադրբեջանցիներ վարձած նավակով բողոքի կարգախոսներ էին բացականչում նախագահ Տեր-Պետրոսյանի դեմ եւ այրում էին Հայաստանի պետական դրոշը: Նրանց ցուցադրաստաններին գրված էր՝ «Տեր-Պետրոսյան, արյունոտ ձեռքերդ հեռու Ադրբեջանից»:

ՏԱՋԻԿՍՏԱՆ

Մահափորձ Ռահմոնովի դեմ

30 ԱՊՐԻԼ, BBC Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովի դեմ մահափորձ կատարվեց: Դա տեղի ունեցավ հյուսիսային Տաջիկստանի

Լենինաբադի մարզի վարչական կենտրոն Խուջենթ քաղաքում: Ռահմոնովը քաղաքի կենտրոնում գնում էր ելույթի եւ երբ դուրս եկավ մեքենայից, նրա ոտքերի առջեւ նռնակ պայթեց: Նախագահը վիրավորվեց ոտքից, նրա կյանքին ոչինչ չի սպառնում, սակայն նռնակի պայթյունից զոհվեց 2 եւ վիրավորվեց 49 մարդ: Հանցագործության վայրում ձերբակալվել է մի կասկածյալ ոտք, ինչպես պարզվել է, խորհրդային անցած տարի տեղի ունեցած հակակառավարական ցույցի կազմակերպիչներից է:

ADANA
COMMERCIAL BANK

★ Ընդամենը 1%-ով կատարում ենք փոխանցումներ Մոսկվայից և Սանկտ-Պետերբուրգից 1 օրվա ընթացքում, իսկ աշխարհի այլ երկրներից 3 օրվա ընթացքում անհատ և իրավաբանական անձանց համար:
★ Ամենաշահավետ պայմաններով տարածում ենք Master Card/ Euro Card և սպասարկում ենք Master Card/ Euro Card, Visa, Diners Club, JCB:
★ Ընդունում ենք ավանդներ հետեւյալ տոկոսադրույքներով

ԺԱՄԿԵՏ / ՏԱՐՈՒՐԵՎ	1 ԱՄԻՍ	2 ԱՄԻՍ	3 ԱՄԻՍ	6 ԱՄԻՍ	9 ԱՄԻՍ	12 ԱՄԻՍ
USD DEM FRF	2.5%	5.0%	9.0%	18.0%	27.0%	36.0%
AMD RUR	3.0%	6.0%	10.0%	20.0%	30.0%	40.0%

Նվազագույն գումարը չի սահմանափակվում:
★ Կատարում ենք բանկային ցանկացած գործառնություն:

Դիմեցեք ԱԴԱՆԱ ԲԱՆԿ
Երևան, Նալբանդյան 5, հեռ. 58-38-64, 58-59-80

«ԱՅԱՔՍ»
ՖԻՐՄԱՆ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է
Մայիսի 5-ին հաճելի տուրիստական ուղեւորություն
7 ՕՐ
ՀՆԴԿԱՍՏԱՆ
■ Կտեսնեք կախարդական Դելհին
■ Հարմարավետ հյուրանոց
■ Էկզոտիկ էքսկուրսիաներ
■ Շահավետ առեւտուր
■ Նոր գործընկերներ
ԱՅԱՔՍ-ը Ձեզ պատրաստել է հաճելի անակնկալ:
Երկու շաբաթը մեկ անգամ կանոնավոր ուղիղ չվերթ
ԵՐԵՎԱՆ-ԼԱՌՆԱԿԱ (ԿԻՊՐՈՍ)
Հրաշալի Միջերկրական ծովափ
Բարձրակարգ հյուրանոցներ լիակատար հարմարություններով
Կազմակերպվում է ավիատոմսերի վաճառք ԱՊՀ եւ բոլոր ուղղություններով:
ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 43/ա ՀԵՌ. 538845, 531573

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Զվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:
Զանգահարել 27 22 57 ժամը 10-16, 58 33 26 ժամը 18-23

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
3 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 5-րդ հարկում, 70/50 մ, ավտոտնակով: Հրաչյա Քոչար 23 (նախկին Չեկի խանութի մոտ):
Հեռախոս՝ 22-42-68

ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
2 սենյականոց բնակարան 5 հարկանի քառ. շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 շենք:
Հեռ.՝ 581841, 523056

ԴՈՒՔ ՈՒՆԵ՞Ք ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊՐՈԲԼԵՄՆԵՐ
■ Ծառերի ապօրինի հատում
■ Թափոնների եւ աղբի այրում
■ Աղբի կուտակում
■ Օդի, ջրի, հողի աղտոտում
■ Ապօրինի շինարարություն
■ Այլ էկոլոգիական խնդիրներ
Ոռակյալ իրավաբան մասնագետների կողմից անվճար իրավական օգնություն ստանալու համար դիմեք շրջակա միջավայրի իրավական պահպանության հասարակական կենտրոն
Հասցեն. Երեւան 375009, Կորյունի փող. 8, բն. 8
Հեռ. 56 13 86

ՍԱԹԻ-ՀԱՅԱՍՏԱՆ
SATI-ARMENIA
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ
երկրագնդի ցանկացած երկրից Հայաստան եւ հակառակ ուղղությամբ
■ Մասնավորապես Իրան եւ Իրանի տարանցիկ ճանապարհներով Միացյալ Արաբական Էմիրություններ, Սիրիա, Թուրքիա, Հունաստան, Իտալիա, Թուրքմենստան, Տաջիկստան, Ղազախստան, Հնդկաստան եւ Չինաստան:
■ Արտահանման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատրաստում:
ՍԱԹԻ ՀԱՅԱՍՏԱՆ
Հասցեն՝ Երեւան, Սեբաստիայի փող. 21
Հեռ. 53 11 20, 53 10 22
AT&T հեռ./ֆաքս 151383

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՍՓԱՐԿԻ ԵՎ ՊԱՀՊԱՆՋԱՐԿԻ ԱՍՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ 589167 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան 23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Գագիր 69149. Պատվեր 569. Տպաքանակը 3000. Ստորագրված է տպագրության 30.04.1997. Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@